№ 95 ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 3

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 3 № 95

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տէլէֆօն № 253.

Կիրակի, մայիսի 4-ին

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒԵՏԵԱՆ ՇԱԼԱՄԵԱՆՑԻ

մահվան քառասունքի օրը Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցում կը կատարվի հոգեհանգիստ, որի մասին յայտնում է ազգականներին և ծանօթներին հանգուցեալի այրի Մարիամ Կոնեան Շալամեանցը։ Հոգեհանգստի սկիզբն է ժամը 12-ին։

(շ.) 1—1

Ստեփան, Բագի և այրիացած Վարվառէ Յակոբեանցները յայտնում են իրանց ազգականներին, բարեկամներին ու ծանօթներին՝ առաջինի և երկրորդի թանգագին որդու, իսկ երրորդի ամուսնու՝

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՅԱԿՈԲԵԱՆՑԻ

մահվան քառասնօրէքի հոգեհանգստի մասին, որ տեղի կունենայ կիրակի, մայիսի 4-ին, Ջուղուրէթի ս. Աստուածածին եկեղեցում, (Պանասեվիչա փողոց)։ Պատարագի սկիզբը ժամը 10-ին, իսկ հոգեհանգստինը՝ 12-ին։

Շաբաթ օր, մայիսի 3-ին
Ժողովրդական բեմի սիրողների խումբը
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՕԳՏԻՆ
կը ներկայացնէ
Արտիստական ընկերութեան թատրոնում
ՌՈՒՍԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ

ИЗМѢНА

Ողբերգութիւն 5 գործողութեամբ, հեղինակութիւն իշխ. Սումբատովի
Մասնակցում են. օր. Ի. Քալանթար, Գալինա, Մուսինա, տիկիններ Վլասովա, Կոտովա, պ. պ. Բէյլին, Զվագա, Իրանսկիյ, Նիզոլին, Լէօնիդով և ուրիշներ։
Սկիզբը 8 ժամին երեկոյեան

տո. 3—3

Նախազգուշացում

Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎ Д. З. Сараджевъ
ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԻՑ

Նորերս ի վաճառ է հանվել օղի (столовое вино)

„ԸՆԿ. Գ. Մ. ՍԱՐԱՋԵՎ“ „Т-во Г. М. Сараджевъ“

ֆիրմայով և մերին կատարելապէս նման էտիկէտներով, նպատակ ունենալով մոլորեցնել պ. պ. սպառողներին, մեր ֆիրմայի հռչակով օգտվելու նպատակով։

Թողնելով դատարանին ապրանքի տարածման այդպիսի մի ձևի գնահատութիւնը, գրասենեակը խնդրում է յարգելի հասարակութեան ուշադրութիւն դարձնել ֆիրմայի էտիկէտների վրա անուան և հօրանուան սկզբնական „Դ. Զ.“ „Д. З.“ տառերին, նոյնպէս գործարանի դրօշմի՝ «այծեամը ժայռի վրա»։

(օ. մ.) տո. 25—16

ԵՐԵՔՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍԻ 6-ԻՆ
Թիֆլ. Ժողովարանի այգում
Ս. Նշանի դպրոցի չքաւոր աշակերտուհիների օգտին
կը կայանայ

ՋԲՕՍԱՆՔ
„ԾԱՂԻԿՆԵՐԻ ՏՕՆԸ“

Հետևեալ ծրագրով.
1) ՎԻՃԱԿԱԽԱՂ
2) ծաղկամարտ, 3) օդամարտ, 4) ձիարշաւ, 5) օճամարտ, 6) բաղդի տակառ, 7) կարթ, 8) կօնֆէտի և այլն։
Երեկոյեան ժամը 7-ին տեղի կունենայ
ԾԱՂԻԿՆԵՐԻ ԳՆԱՑՔԸ
լապտերներով, դրօշակներով, որին կը մասնակցեն ծաղիկներով զարդարված երեխաները մինչև 10 տարեկան։
Լաւագոյն և ամենաճաշակաւոր ծաղիկներով զարդարված մանկական գլխազարդերը կարժանանան
Երկու արժէքաւոր պրէմիաների։
Երաժշտութիւն՝ եւրոպական և ասիական։
ՊԱՐԵՐ
Սկիզբն է ժամը $3^{1}/_{2}$-ին ճաշից յետոյ
Մուտքն արժէ՝ երեխաների և աշակերտների համար 15 կ., հասակաւորների համար 30 կ.։

(շ. կ. ե.) տո. 3—1

Թիֆլիսի Ժողովարան

Շաբաթ, մայիսի 4-ին
Վրաց դրամատիկական խումբը
անդամների, կանդիդատների և նրանց ընտանիքների համար
կը ներկայացնէ
„Что искалъ, то и нашелъ“
Կօմ. 3 գործող., Վ. Զօրջաձէի
Տոմսակները 1 րուբլուց մինչև 30 կ.
Սկիզբն է երեկոյեան ժ. $8^{1}/_{2}$-ին

(շ.) տո. 1—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Հայոց Ազգագրական Ընկ. հրատարակութեամբ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
եռամսեայ, պատկերազարդ
հրատարակութեան 1908 թ. № 1. (XVII գիրք)
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.
Տարեկան (4 գիրք) բաժանորդագինն է 5 ր. կամ 13 ֆրանկ.
Դիմել՝ Ред. „Азгаграканъ Андесъ“, Саперная 5. Тифлисъ. Red. «Azgagrakan Handess» Tiflis.

(ե. հ. ու. շ. կ.) տո. 10—10

Նկարիչ ԱՐՇԱԿ ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
ՋՈՒՏ
ԱԿՎԱՐԷԼՆԵՐԻ
Ցուցահանդէսը
բաց կը մնայ մինչև կիրակի մայիսի 1-ը։
Կովկասեան գիւղատնտեսական կայսերական ընկերութեան դահլիճներում.
Բարեատինսկայա փողոց.
Ցուցահանդէսը բաց է ամեն օր առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 5-ը։
Մուտքը արժէ 30 կոպէկ։
Աշակերտները և զինուորները վճարում են կէսը։

(ա. օ.) տո. 20—17

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

Ներկայ մայիս ամսին Ղազախի գաւառի Ուզունթալա գիւղում և Ալէքսանդրօպոլի գաւառի Փամբակի մի քանի գիւղերի շրջանում կը բացվեն տնայնագործական արհեստանոցներ։ Ամառվայ ընթացքում դիտաւորութիւն կայ նոյնատեսակ մի գործի նախապատրաստական գործողութիւնները կատարել Զանգեզուրի գաւառի Սեղբի գիւղում։

Բացի այդ՝ Փամբակի շրջանում կը բացվեն և կաթնատնտեսական դասընթացքներ գործնական պարապմունքներով։

Որոշված է կուլտուրական այդ փորձերը անել ամառվայ ընթացքում և գրաւել դէպի այդ գործը թէ գիւղացիներին և թէ կողմնակի ցանկացողների, օրինակ ուսուցիչների, պաշտօնեաների և այլն։

Եւ անկասկած՝ ուսուցիչների համար ամառը ունի որոշ յարմարութիւններ այդպիսի զբաղմունքների համար, բերև մի ժամանակ, երբ նրանք ազատ են դպրոցական պարապմունքներից։

Գիւղացին, սովորելով նոր արհեստ, անմիջապէս կարող կը լինի գործադրել իր կեանքում, իսկ ուսուցիչը, իւրացնելով արհեստը, կարող կը լինի ապագայում դասաւանդել նոյնը ուրիշներին։

Անշուշտ, մի երկու-երեք ամսվայ ընթացքում չէ կարելի հիմնաւորապէս իւրացնել նոր արհեստները, բայց կարելի է ստանալ նախնական այնքան պատրաստութիւն, որ այնուհետև բաւական լինի միայն վարժութիւններ անել և կատարելագործվել։

Թիֆլիսի հայ տնայնագործական ընկերութիւնը, որ նախաձեռնում է ջուլհականոցների բացումը գիւղերում, եթէ կարող լինի աջողութեամբ գլուխ բերել իր վրա վերցրած աշխատանքը, կը տայ գիւղացու ձեռքը աւելի լաւ գործիքներ, քան ունեցել է գիւղացին մինչև այժմ իր տրամադրութեան տակ, և երկրորդ կը սովորեցնէ պատրաստել աւելի բազմատեսակ նիւթեր, քան սովորական հասարակ գործուածքները, որոնք պատրաստվել են մինչև այժմ գիւղերում։

Անտարակոյս ամենամեծ խնդիրներից մէկը, որ ուժեղ զարկ կը տայ արդիւնագործութեանը, կը լինի պատրաստած իրերի սպառումը և նրանց լայն ու ընդարձակ վաճառահանութիւնը, որովհետև երբ մեծ պահանջ կը լինի որոշ մթերքի և իրերի, նրանց համապատասխան կարիք կը զգացվի պատրաստել այդ իրերը և ընդարձակել արդիւնագործութիւնը այնքան, մինչև որ պահանջը լրացվի։

Ուստի նոր արդիւնագործութեան փորձերը պէտք է հաշիւ տեսնեն զանազան դժուարութիւնների հետ, մի տեղ կենտրոնացնելով ուշադրութիւնը տեխնիկայի զարգացման վրա, միւս տեղ միջոցներ ձեռք առնելով, որ նոր ապրանքների համար սպառման տեղեր կամ շուկաներ ապահովվեն, մի երրորդ տեղ ուժեղացնելով թէօրիայի իւրացումը նոր կատարելագործութիւններ մտցնելով։

Ցանկալի է, որ կուլտուրական փորձերը գրաւէին մեր գիւղական գործողների ուշադրութիւնը և շարժէին մեր ուսուցչական խմբերի հետաքրքրութիւնը, որպէսզի բացվող արհեստանոցները և դասընթացքները կարող լինէին հասնել իրանց նպատակին։

Ա. Քալանթար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Թիւրքական Հայաստանի հայ տառապեալներին օգնութեան հասնելու համար կազմված Հանգանակիչ Մասնաժողովը ստացել է Կ. Պոլսի հայոց Օրմանեան պատրիարքից մի նոր գրութիւն, որից առաջ ենք բերում հետևեալ կտորները.

«Անտի և այսր ի Նորոյ հասած գրութիւններ, դժբաղդաբար, կը ցուցնեն թէ հոն (Հայաստանում) իրաց վիճակը ոչ միայն չէ բարեփոխուեր, այլ և սաստիկ վատթարացեր է. սովն ու սոսկալի խեղճութիւնը հետզհետէ աւելի մեծ համեմատութիւններ ստացեր են, այնպէս որ միայն Վանայ գաւառին մէջ 5000-է աւելի կը հաշուըուի հացակարօտ մերկանէից թիւը, նոյնիսկ անօթութենէ մեռնողներ ալ անպակաս են եղեր։

«Ընդ գրոյս կը հաղորդենք դարձեալ վերջին անգամ պատրիարքարան հասած գրութեանց մէկ ամփոփումն ևս, որ կը պարզէ փոքր ի շատէ գաւառներու մէջ տիրող ներկայ աղաւոր կացութիւնը, և որ անգամ մը ևս կուգայ շեշտել անմիջական պէտքը այդ սովեալներու օգնութիւն հասցնելու և զանոնք ստոյգ մահուընէ փրկելու։

«Դժբաղդաբար այդ թշուառ էակներուն որևէ չափով օգնելու համար մեր միջոցները բոլորովին սպառած են և յոյսերնիս կեդրոնացած են միմիայն արտասահմանի մեր պատուական հայ եղբայրներուն գթասրտութեան և պատ. Մասնաժողովիդ գործունէութեան վըրայ, որոնցմէ ևեթ կը սպասենք այս աղէտին մեղմացումը, այս տագնապալից վիճակին դարմանը։ Եւ ասոր համար կը պարտաւորինք վերստին ձեզ դիմել և յանուն հազարաւոր անօթիներու խնդրել, որ բարեհաճիք փութացնել ձեր օգնութիւնները, երբ հազարաւոր բերաններ՝ ծեր և տղայ, երիտասարդ և կուսան՝ հաց կաղաղակեն մեզ, և քանի որ դեռ ժամանակ կայ փրկելու զանոնք մահուան ու կորստեան վերահաս վտանգներէն»։

Իսկ Հայաստանի զանազան կէտերից Կ. Պոլսի պատրիարքարանի ստացած դիմումների ամփոփումները կը տանք «Մշակի» հետևեալ համարում։

Միևնոյն ժամանակ հարկ ենք համարում յայտնել, որ Հանգանակիչ Մասնաժողովը Կ. Պոլսի ռուսաց դեսպան Զինօվիևի անունով նորից փոխադրեց 10,000 ֆրանկ՝ Թիւրքահայաստանի հայ սովեալներին բաժանելու համար։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պեատիգորսկ, 2 մայիսի

Երէկ բացվեց բժշկական սէզօնը Պեատիգորսկի հանքային ջրերում։ Եղանակը պարզ է, տաք։ («Հ. Գ.»)

—

Շանխայ, 1 մայիսի

Տօնկինում կազմակերպված յեղափոխականների զեղեցիկ զինված զօրախմբերը ներս խուժեցին Իւնան նահանգը և ուղղվում են Մընցզի։ Իւնանում լաւ վարժված զօրքի լիակատար բացակայութեան պատճառով դրութիւնը յուզալից է համարվում։ Բոլոր հարևան գաւառները հրաման ստացան զօրքեր ուղարկել այնտեղ։ («Հ. Գ.»)

—

«Гол. Моск.» լրագիրը շարունակում է անհանգստացուցիչ լուրեր հաղորդել իրերի դրութեան մասին Թիւրքական սահմանագլխի վրա։ Նրա ասելով, անձնական գործերով Էրզրում գնացող տեղացի բնակիչները ամենակտրուկ կերպով վկայում են, որ Էրզրումում կենտրոնացված է մօտ 750 թընդանօթներ, որոնք պէտք է բաժանվեն ինչպէս դէպի մեր սահմանները ուղարկվող ամբաձիգ զօրամասերի վրա, նոյնպէս և Էրզրումի ամրութիւնները ուժեղացնելու համար։

Սահմանին մօտ գտնվող տեղերում տեղի են ունենում զօրաշարժումներ, մեծ գաղտնապահութեամբ։ Էրզրումում ներկայումս զէնքի տակ են դրված 30 թաբուր հետևակներ, մօտ 2500 դրագուններ և 750 նոր թնդանօթներ։ Նարիմանում և Դալիբաբայում (մեր Օլթիի շրջանի հանդէպ) արդէն կենտրոնացված են 1 և կէս հազար հետևակ զօրքեր, իսկ Իգդում, բացի հետևակներից, հաւաքված է նաև համիդիէ։ Սահմանագըլխի կետակ գիւղերում (Կարաուրգանի մօտիկ) նշանակված է հետևակների մի թաբուր, իսկ Ղարաքիլիսայում՝ համիդիէյի մի գունդ։

Հերքելով հանգստացնող լուրերը, թղթակիցը առաջարկում է հանգստացնողներին պատասխանել հետևեալ փաստերին. 1) սահմանի վրա սահմանապահ զօրքերի երկու-երեք անգամ կրկնապատկելը մերից, 2) Բաթումում մի մարդու կալանաւորվելը, որ առանձին եռանդով լուսանկարում էր քաղաքն ու ամրութիւնները, 3) մօտ օրերումս Օլթի և նրա շրջակաները Թիւրք օֆիցերների հիւր գալը, որի մասին յիշված էր «Тиф. Лист.»-ի № 76-ում, և 4 Թիւրքական էմիսարների կողմից Անդրկովկասում մեծ քանակութեամբ անասուններ առնելը, որը նրանք մտադիր էին, վրացիների և իմերեթների բարեհաճ աջակցութեամբ, կենտրոնացնել նախ Օզուրգեթի գաւառում և ապա Աջարիայի վրայով ուղարկել Թիւրքիա, բացառապէս անատոլիական զօրքերի համար։

—

Հնդկաստանի Կալկաթա քաղաքում, ինչպէս յայտնի է, երևան է հանված մի գաղտնի դաւադրութիւն։ Շարունակվող ոստիկանական խուզարկութիւնները, «Рус. Сл.» լրագրի ասելով, պարզել են, որ դաւադրութիւնը նպատակ է ունեցել Հնդկաստանում ընդհանուր ապստամբութիւն առաջ բերել, սպանել լորդ Կիտչեներին, օդը թռցնել գլխաւոր հասարակական հաստատութիւնները և դուրս վռնդել անգլիացիներին։

—

Գեներալ Սնարսկու զօրախումբը արդէն մտել է Դըմանին։ Թազաքենդ գիւղի բնակիչները, որ հպատակում են Մամեդ Ղուլի-խանին, լսելով զօրքերի գալուստը ռուսաց պատկանող սահմանագլխի հողը մաքրելու նպատակով, առանց սպասելու որ բռնի կերպով հեռացնեն իրանց, թողել փախել են։ Զօրքերը քանդել են տների միացորդներն ու տանիքները։ Գիւղը բոլորովին աւերված է, Մամեդ Ղուլի-խանի յափշտակած հողը մաքրված և ռուսաց զօրքերով գրաւված։

Գեներալ Սնարսկին, ինչպէս ասում են, Սալարից նամակ է ստացել, որի բովանդակութիւնը առայժմ համարվում է գաղտնիք։

Անկարգութիւններին չը մասնակցող Թափառական ալարցիների ցեղապետ Ամինը ներկայանալով գեներալ Սնարսկուն պատրաստակամութիւն է յայտնել ենթարկվել նրա պահանջներին։

Սահմանապահներին ուժեղացնելու համար որսորդական խմբերի փոխարէն սպասվում են ութ առանձին վաշտեր։

Բագուի պարսկական հիւպատոս Մօրասուրի-ուլ-Միւլքը Բէլօսուարում այցելութիւն տալով իշխանութիւններին՝ շրջագայել է անկարգութիւնների ժամանակ քանդված գիւղերը՝ փախուստ տուող գիւղացիներին վերաբնակեցնելու իրանց բնակարաններում և համոզելու նրանց վերսկսելու իրանց դաշտային աշխատանքները։ («Кс.»)

—

Ուրմի, 16 ապրիլի

Բնութիւնից հարուստ և արդիւնաւոտ մի երկրի խիտ առ խիտ, չէն գիւղերը թալանում են, նախիրները տանում, բնակիչները ցիր ու ցան անում։

Այսպէս են վարվել մի ամսվայ ընթացքում 59 գիւղերի հետ։ Այսպէս վարվողները պարզապէս քիւրդեր են, և սա քիւրդերի հին արհեստն է։

Մէկ... երկու... և իսկոյն կը զարկէին

անզգամները. այս անգամ, մի այս չարագուշակ անգամը, երկու ամբողջ տարի եղաւ. Ով գիտէ թէ էլ մինչև երբ պիտի տևէ։

Մեր տառապող երկրի իշխանութիւնները չը կարողացան թէ չը կամեցան ցայսօր վերջ տալ տիրող չարիքին։

«Տունն անաւեր է մնում, երբ հարսները երկու են»,—ասում է ժողովրդական առածը։ Երանի ճարը միայն այս լինէր։ Հարսներից մէկին ու մէկին հեռացնել կարելի էր։

Թալանված, տրորված և կոտորած տուող գիւղացիները ամենայն օր թափվում են քաղաք, մէկ անջուժանի և մէկ նահանգապետի դռները, աղերսում, օգնութիւն են հայցում և չեն գտնում։

Անջուժանը կառավարութիւնից է սպասում, վերջինը անջուժանի վրա է թողնում հոգալ. իսկ այս ձեռքի շնորհիւ տուժում են ու տուժում երկրին լիութիւն պարգևող քրտնաջան գիւղացիները։

Ցուսահատված գիւղացիութիւնը մտադիր է պահանջել անջուժանի վերացումը։ Կառավարութեան ուզածն էլ այդ է։

Այս չէ բոլորը։ Չարիքի գլխաւոր աղբիւրը մենք աւելի հեռու ենք գտնում։

Ռուս-ճապոնական պատերազմի անյաջող վերջաւորութեամբ սուլթան Համիդը երազում էր օգտվել դրացու ձախորդութեամբ... Բայց երբ ազատագրութեան ձայնը հնչեց 1905 թ. հոկտ. 17-ի մանիֆեստով և երբ տեսաւ մեծ փորձանքից յետոյ չեն ընկճված, դարձեալ անվհատ վերադառնում են անդրէն վերանորոգվելու Ռուսաստանի լաւագոյն զաւակները, երազողի անուրջները առ ժամ ուղղվեցին ուրիշ կէտի վրա։ Նա նկատեց բարձրագոյն մանիֆեստի «Նոր վտանգը», նկատեց վերջապէս ազատագրութեան հովերի փոխանցման վարակը։

Եւ չը սխալվեց։ Վերանորոգութեան հովերը փչելով վարակեցին աննշանապէս Թիւրքիային և նշանաւորապէս Պարսկաստանին, վերջինը խեղճն և իսկ սահմանադրական օրէնքներով կառավարվող մի երկիր դարձնելով, որը Թիւրքիայի նկատմամբ լինելու էր ամենաաննպաստ «քար գայթակղութեան», մի քար, որին օր առաջ հարկ էր անդունդը գլորել։

Եւ այս չարանիւթ ծրագիրը առաջ տանելու համար, յայտնապէս ոտքը դրեց պարսկական հողը և դուրս գալիք էլ չունի։ Միւս կողմից էլ վերջինի մանուկ սահմանադրութիւնը վերջնականապէս կը խեղդի։ Եւ այսպէս մի քարով երկու թռչուն կաջողի խփել։

Անցեալ տարի ճիշտ այս օրերին, երբ այստեղ անջուժանը իր ազդեցութեան բարձր շրջանումն էր, Թաւրիզից մեծ քանակութեամբ ռազմամթերք բերել տալով Մէջիդ-Սալթանէի զօրավարութեամբ ուղարկեց քիւրդական հրոսակախմբեր կազմող և երկրին աւերող աշիրաթներին պատժելու ու կարգի հրաւիրելու։

Եւ որովհետև գազանութիւնը զսպել, յանցանքները պատժել, սուլթան-Համիդի տեսակէտով, նշանակում է աններելի մեղք գործել, այդ պատճառով էլ ի պաշտպանութիւն իր համագործակից աշիրաթների, թէպէտ պարսկահպատակ, անպատժելիօրէն իր հրաձիգներով ցցվեց Մէջիդ-Սալթանէի զօրաբանակի դէմ ու դէմ։ Բնականաբար Մէջիդ-Սալթանէն պէտք է նահանջէր և նահանջելու նշանը տուեց զօրքին։

Տեղի ունեցած անակնկալը և դէպի զօրքն ուղղած թնդանօթների որոտը դիւցէպէլնային անծանօթ պարսկական զօրքին մատնեց ոչխարային փախուստի, տեղն ու տեղը թող տալով ռազմամթերքի և վրանների ամենամեծ մասը։

Ս'ա առաջին ապտակն էր, մեծ բռնապետի կողմից, պարսկական նորածանուկ սահմանադրութեան երեսին։ Եւ այդ օրից Մար-գավառ, Թէր-գավառ արգաւանդ գաւառներին տիրապետելով առաջացաւ մինչև Ուրմիի սահմանները, ուր նստած աչք է տնկել էլ աւելի հեռուները...

Աշիրաթները այս երևոյթից երես առած՝ իրանց գազանային ջանքերն բազմապատկեցին։ Այնպէս որ անցեալ մարտ ամսից կարգով սկսել են Ուրմիի չորս կողմի գիւղերը աւար-աւերակ դարձնել, կանանց, աղջկանց բռնաբարել ու գերել։

Կառավարութիւնը մինչև այժմ հանդիսանում է անկարող բռնութիւնների առաջն առնելու, իսկ անջուժանը՝ անկարողագոյն։

Չէ կարելի ասել, որ այս հանգամանքը ձեռք չէր տալիս պարսից միապետական կառավարութեան։

Այսպէս մտածելու իրաւունք ենք տալիս մեզ, երբ սահմանների հարցի մասին երկուստեք երկարատև ժողովները դրական ոչ մի հետևանքի չը հասան, և երբ Պարսկաստանի անձեռնմխելիութիւնը հովանաւորող դաշնադիր պետութիւնների ներկայ հիւպատոսներին ժողովներին մասնակցելու չը հրաւիրեցին։

Ամենագլխաւորը՝ չափազուլների երեսից ժողովուրդը ոտքի տակ գնաց, տրորվեց։

Եթէ միտ բերենք Թէհրանի մի քանի ընդհարումները ժողովրդեան և կառավարութեան կողմնակիցների մէջ, որ չը կարողացան շարժումները կանգնեցնել, կատարելապէս կը համոզվենք, որ միահեծան իշխելու ցանկութիւնը երկու կառավարութիւնների սուտ նպատակն է։ Տարբերութիւնն այն է, որ պարսից շահը, ինչպէս և նորին վեհ. հանգ. հայրը, պապը, ժողովրդի արեան հետ խաղալու յատկութեան անսովոր են, այն ինչ արեան ծարաւ և հաւասարը չունեցող սուլթանը հազարատակ աւելի ճիգ է թափում ազատ օրէնքներով ապրելուն ձգտող ժողովուրդների յոյսը չքացնել, լոյսը խաւարեցնել. Թող ուրեմն «օձը սէյիդ Ահմադի ձեռքով բռնվի»։

Վերջապէս սահմանցիների սահմանն անցնելը, Մար-գավառ, Թէր-գավառ և այլն գաւառների տիրանալը, քիւրդերի Սօվուջ-Բուլաղ, Սլդուզ, Բարանդուզ, Սալմաստ և ամենից շատ Ուրմիի գաւառին հասցրած աւերածութիւնները նախորոշ ծրագիրներ են, որոնք կազմված են ժողովուրդը դէպի յետ խեղդի բերելու. ուրիշ խօսքով, պարսկական մանուկ սահմանադրութիւնը օրօրոցում խեղդելու։

Ամսիս 5 ին հեռագրական գիծը դէպի Սալմաստ քիւրդերը փչացրել են։ Հեռագիրը այստեղից Սալմաստ, Թաւրիզ, դէպի Ռուսաստան և այլուր յատուկ մարդով են ուղարկում Սալմաստի կայարանից և կամ Թաւրիզից խփելու, իսկ այն կողմից եկածները նամակներով են ուղարկվում այստեղ։

Ապրանքների արտահանումը և ներմուծումը կանգ է առել։ Դաշտային աշխատանքները դադարած են։ Այգեգործութիւնը, որ այս երկրի ամենաշատ տարածութիւնն է գրաւել, մնացել է անմշակ։ Ժամանակն այս ամիսն էր, պէտք էր որթերը կտրտել, առուները փորել. այդու վերաբերմամբ այսօրվայ սաեկքը վաղվան չէ կարելի թողնել։ Մարդիկ երկիւղից չեն կարողանում դաշտ դուրս գալ պարապմունքի։

Թահիր փաշան կրկին վերադարձել է Մաւանա, ուր իրանց զօրաբանակն է, բայց ոչ նախկին պաշտօնով։ Թահիրի պաշտօնը յանձնված է Հիւսէյն-Ալի փաշային, որը շուտով քաղաք կը գայ։

Աբգար Տէր-Եսայեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

V *)

Մեր ընթերցողներն իմացան, որ տեղապահը և սինօդը հնարաւոր չը համարեցին յետաձգել ծխական պատուիրակների ընտրութիւնը, որի համար միջնորդութիւն էր յարուցված մի խումբ անձանց կողմից։ Ուրեմն, շուտով տեղի կունենան ծխական պատուիրակների ընտրութիւնները մեր թեմերում և մեզ մնում է միայն մասնակցել այդ ընտրութիւններին։

Եւ մասնակցելով՝ մենք պէտք է աշխատենք, որ ծխական պատուիրակներ ընտրըվեն այնպիսի անձինք, որոնք 1) իրանց համոզմունքով, ուղղութեամբ անպայման կողմնակից են կաթողիկոսական ընտրութեան, 2) համոզված են, որ հայ ժողովրդի ներկայ պայմաններում կաթողիկոսական հաստատութիւնը մի կարևոր ֆակտոր է հայ ժողովրդի կրթական-հոգևոր-բարոյական կեանքի բարգաւաճման գործում, 3) կողմնակից են այն սկզբունքին, թէ ժամանակ է վերջ դնել կաթողիկոսների անսահման, բացարձակ, միապետական կամ խանական-փաշայական, կամայական իշխանութեան և սահմանափակել այդ իշխանութիւնը ժողովրդական կոնտրօլով ու ժողովրդից օրինաւորապէս ընտրված գործադիր մարմինների հեղինակութեամբ, 4) կողմնակից են անպայման այն սկզբունքին, թէ հայոց եկեղեցին պէտք է լուրջ դեմօկրատական հիմունքների վրա դնել։

Ինչ վերաբերում է կաթողիկոսի ունեցած քաղաքական նշանակութեան,—մի հանգամանք, որ վերջերս կայացած խորհրդակցութիւնների ժամանակ մի երկու անձինք աշխատեցին շատ մեծ և բարձր ցոյց տալ,—մենք պէտք է ասենք, որ այդ նշանակութիւնը չափազանցված է։ Ճիշտ է, ռուսաց կառավարութիւնը սկզբում աշխատեց կաթողիկոսութեան նշանակութիւնը շատ բարձրացնել, որպէսզի դրանով հնարաւորութիւն ունենայ մեծ ազդեցութիւն և հեղինակութիւն ձեռք բերել Թիւրքաց հայերի վրա, բայց երբ նա համոզվեց, որ կաթողիկոսները չեն ծառայում այդ նպատակին, որ նրանց ազդեցութիւնը Թիւրքիայի հայերի վրա առերևութային է, որ, ինչպէս շատ ճիշտ նկատել է բարոն Նիկոլան, Թիւրքիայի հայերի աչքերը յառված են ոչ թէ Էջմիածնի, այլ Ռուսաստանի վրա, երբև ազատարարի Թիւրքական լծից, այդ օրից կաթողիկոսի քաղաքական նշանակութիւնը սկսեց նսեմանալ։ Այնու ամենայնիւ, կաթողիկոսը դեռ ունի որոշ չափով քաղաքական նշանակութիւն, քանի որ լուծված չէ հայկական չարաբաստիկ հարցը։

Մեզ ռուսահայերիս համար կաթողիկոսի նշանակութիւնը դեռ մեծ և կարևոր է հոգևոր-կրթական-բարոյական ասպարէզում, երբև պետ մի հաստատութեան, որ ժողովրդական է, որ սերտ կերպով կապված է նրա պատմութեան հետ և որ օժտված է մի որոշ չափով դեմօկրատիկ հաստատութիւն դառնալու բոլոր յատկութիւններով։

Այս ամենը մենք ասացինք, ցոյց տալու համար, որ կաթողիկոսական պատուիրակների ընտրութեանը մենք պէտք է վերաբերվենք գիտակցօրէն, լրջօրէն և աշխատենք ընտրել համապատասխան անձանց պատուիրակներ, որոնք և կարողանան ընտրել համապատասխան թեմական պատգամաւորներ։

Շատերին հետաքրքրում է այն հարցը, թէ մեր տնածին յեղափոխական կուսակցութիւնները կը մասնակցեն արդեօք ընտրութիւններին և, եթէ չը մասնակցեն, ինչ ձևով։

Ոչ մի տարակոյս չը կայ, որ սօցիալ-դեմօկրատական խմբերը չեն մասնակցի կաթողիկոսական ընտրութիւններին։ Մի կուսակցութիւն կամ մի հոսանք, որ հերքում և ժխտում է եկեղեցու գոյութիւնը, երբև մի հաստատութիւն, որ, նրա կարծիքով, մթագնացնում է ժողովրդական մասսաների գիտակցութիւնը, չէկկարող, ի հարկէ, մասնակցել այդ հաստատութեան պետի ընտրութեան։ Բայց մեր տնածին յեղափոխական կուսակցութիւններից և մանաւանդ դաշնակցականներից դժուար թէ կարելի լինի սպասել անկեղծ վերաբերմունք դէպի այդ հարցը։ Մինչև այսօր այդ կազմակերպութիւնը որոշ կերպով չը յայտնեց իր բռնելիք դիրքը և ուղղութիւնը. հաւանական է, որ նա նոյն երկդիմի և փարիսեցիական դիրքը բռնէ, որ բռնեց, III Պետական Դումայի ընտրութիւնների ժամանակ, այսինքն պաշտօնապէս նրանք կը յայտարարեն, որ չեն մասնակցում ընտրութիւններին, որպէսզի դրանով փրկած լինեն իրանց սօցիալիստական կեղևը, բայց տակից, ոչ-պաշտօնապէս, ջերմ մասնակցութիւն կունենան, որպէսզի ժողովրդի աչքում երևան նացիօնալիստներ և ազգասէրներ։

Ցանկալի դէպս ժողովրդի վերաբերմունքը ներկայ ընտրութիւնների ժամանակ որոշ և պարզ պէտք է լինի. չընտրել այն անձանց, որոնց թեկնածութիւնը կը պաշտպանեն կեղծաւորները, որոնք ներկայ դէպքում ղեկավարվելու են ոչ թէ եկեղեցու, ժողովրդի շահերով, այլ լոկ իրանց կուսակցական, ժողովրդական շահերի հետ ոչ մի կապ չունեցող նկատումներով։

Պէտք է ընտրել պատուիրակներ առողջամիտ, առաջադէմ, ժողովրդասէր և անկեղծ, անկախ համոզմունքների տէր անձանց, որոնք չը լինեն մանեկէններ այս և այն բիւրօների ձեռքում, այլ կարողանան գիտակցօրէն, բարեխղճօրէն տալ իրանց քուէն։

Հ. Առաքելեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

◆ Պատգամաւոր Մուրզայեվը վերադառնալով Եալտայից՝ ասում է, որ այնտեղ մեծ ուրախութիւն է պատճառում Դումբաձէի գործողութիւնների առիթով պատրաստվող հարցապնդումը, և անհամբերութեամբ սպասում են, որ նա առաջարկվի Դումային։ Դումբաձէի դէմ անվերջ գանգատներ կան։ Կուլուարներում խօսում են, որ սահմանադիր-ռամկավարների ֆրակցիան նոր նիւթեր է հաւաքել Դումբաձէի հարցապնդման համար։ Եթէ հոկտեմբերեանները այդ նիւթերի հիման վրա նոր կէտեր մտցնելու լինեն հարցապնդման մէջ, այն ժամանակ կադետները կը պաշտպանեն նրանց հարցապնդումը։ Հակառակ դէպքում կառաջարկեն իրանց հարցապնդումը։

◆ Դումայի մէջ Կոկօվցեվի շնորհիւ պատահած միջնադէպը դրդել է հոկտեմբերեանների ֆրակցիային մի փոքր թեքվել դէպի ձախ։ Ֆրակցիայի բիւրօն վճռել է պահանջել ներքին գործերի մինիստրի խորհուրդը վերացնելու մասին, որի անդամների պաշտօնները մեծ մասամբ աւելորդ են։ («Сов. Сл.»)

◆ Պատգամաւոր իշ. Գօլիցինը, «Русь» լրագրի աշխատակցի հետ խօսելիս, Ռուսաստանի զանազան մեծ քաղաքների (ինչպէս Կիեվի, Մոսկվայի և այլն) ոստիկանութեան մասին պատրաստվող հարցապնդումի համար հետևեալ միտքն է յայտնել. «Ֆրակցիայի անդամներից շատերը վաղուց էին անհրաժեշտ համարում սենատոր Գարինի Մոսկվայում կատարած քննութեան և Կիեվի մէջ երևան հանված փաստերի հիման վրա Դումայում հարց զարթեցնել ոստիկանութեան մասին։ Մենք նկատում էինք, որ ոստիկանութեան մէջ առհասարակ ինչ-որ էպիդեմիա է տիրում։ Մեզ յայտնի էր նոյնպէս պրեմիէր Ստօլիպին համակրական վերաբերմունքը՝ այդ շրջանի թերութիւնները երևան հանելու առիթով։ Այժմ 9—10 օր Դուման պէտք է զբաղվի ելևմուտի քննութեամբ. հէնց որ այդ աշխատանքը վերջացրինք, ոստիկանութեան մասին հարցապնդումը կը ներկայացնենք Դումային։ Նիւթերը հաւաքվում են օրէ-ցօր և որոշ չափով արդէն պատրաստ է հարցապնդումը։ («Р. Утро»)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Նոր-Բայազէտ, 28 ապրիլի

Օրվայ հրատապ խնդիրը հոգաբարձական ընտրութիւնն է։ Այդ առիթով մի քանի նախապատրաստական ժողովներից յետոյ, երէկ, ապրիլի 27-ին, կայացաւ ծխական-ընտրողական երկրորդ ժողովը, որտեղ առաջարկվեցին հայոց դպրոցի հոգաբարձութեան համար 9 թեկնածուներ, որոնցից տուփերով քուէարկվեցին 6 հոգի։ Սակայն ընտրողների մէջ երկպառակութիւն և թայֆայութիւն առաջացաւ և զանազան խմբեր զանազան շարժառիթներով մեծ պայքար մղեցին իրանց «եսը» առաջ տանելու դրդումով, որ ցանկալի չէր հասարակութեան բանիմաց դասի համար։ Ուստի ընտրութիւնը շատ աղէկալի լինելով վերջնական հետևանքի չը հասաւ։ Այսօրինս խորհրդակցական ժողով է լինելու, իսկ առաջիկայ կիրակի՝ ընտրողական ժողովի շարունակութիւնը։ Լսում ենք, որ հ. Խորէնը բեկանելու է այդ ընտրութիւնը՝ անկանոն լինելու պատճառով, իսկ ժող. մի մասը մտադիր է բողոքելու դրա դէմ. կը սպասենք հետևանքին՝ աւելի մանրամասն արձանագրելու համար։ Առայժմ այսքանը կասենք, որ մեզանում այսպիսի բազմամարդ ծխական ժողով երբէք չէր կայացել, որտեղ ագիտացիան իր գագաթնակէտին էր հասել, նոյնիսկ մի փոքր կուսակցական հողի վրա։ Բայց և այնպէս շատ հետաքրքրական է թէ ընտրողական ժողովի զբաղմունքները որպիսի բաւարար արդիւնք կը տան։ Այդ է ամենաէականը և այդ են պահանջում մեր աղքատիկ ուսումնարանի շահերը...

***

—

Ղազախ, 26 ապրիլի

Ղազախ քաղաքը փոխարկվել է Եգիպտոսի. ստացված է գիւղերին նպաստ սերմվելիք ուտելու ցորենը ևս։ Այստեղ են անխտիր թէ նպաստ ստացող գիւղացիք և թէ նպաստից զրկվածները։ Վերջիններս, իրանց գործը սկզբից փչացրած լինելով, վերջին փորձերն են անում բաժին ստանալու նպաստի ցորենից։

Երէկ գաւառապետ Րէուտի մօտ էի. զրկված գիւղերի մասին էի խօսում նրա հետ։ Ինձ քաջ յայտնի լինելով մեր բոլոր գիւղերի դրութիւնը, յայտնեցի նրան, որ միանգամայն սխալ է կօմիսիայի կողմից բաւականաչափ հայ գիւղերի ցուցակից հանելը, որոնք ոչնչով բաղդատելի չեն նպաստ ստացողներից, մանաւանդ որ չէ կարելի գտնել այնպիսի գիւղ, որի մէջ 20—40 տուն գոնէ սովի բերանում չը լինեն։ Գաւառապետը յայտնեց, որ կօմիսիան ևս, զգալով այդ բանը, միւս ցուցակները կազմել է վերապահութեամբ, որով աւելացող 3000 պուդաչափ ցորենով օգնութեան պիտի գան մնացած գիւղերի սովատանջներին։

Խնդրեցի, ցորենները բաժանելուց առաջ, հնար եղածին չափ կրճատել նպաստ ստացողների ցուցակները։ Րէուտը, հաւանութիւն տալով, օգնութեան անբաւարար չափը վերագրեց այն հանգամանքին, որ պ. նահանգապետը, իրանց պահանջած 200,000 պուդ ցորենի դիմաց, բաց է թողել միայն 40,000 պուդ։ Րէուտն ի միջի այլոց հետաքրքրվեց այն լուրերով, որոնք յամառ կերպով պտտում են։ Նա հարցրեց. «Ճիշտ է արդեօք, որ գիւղացիք, իրանց նպաստ ստանալու գործը ապահովելու համար, կօմիսիայի այս ու այն անդամին կաշառել են»։ Բանից կրկնելով, խնդրեց ինձ ազդել գիւղացիներին, որ նրանք բողոքներ տան և պատասխանատւութեան ենթարկեն կաշառողներին։ Ես յայտնեցի, որ կաշառքների մասին միայն լսել եմ, բայց թէ ով է տուել և ում, ինձ յայտնի չէ. միայն դժուար թէ կարողանամ խառնվել այդ գործերին. աւելացրի նոյնպէս, որ թող տուժեն այն գիւղացիք, որոնք կատարել են նման յիմարութիւններ։

Այսօր լսեցի, որ կօմիսիան երեկոյեան իր ունեցած նիստում, բացառութեամբ միայն մի քանի հայ գիւղերի (խօսքս միայն հայերի մասին է), բաւարար չափով նպաստ է որոշել և ցուցակներից դուրս մնացած գիւղերի համար, որի ընդհանուր չափը 3 հազար պուդից շատ աւելի է. երևում է նախկին ցուցակները բարեփոխված են։

Գիւղերից ստացվող լուրերին նայելով, նախկին ստացված սերմացու ցորենը շատ ընտիր տեսակից է եղել, որը բուսել է և աճում է հրաշալի կերպով. ափսոս որ քաղցած շինականը ստացածի հազիւ մի քառորդն է կարողացել գետին գցել։

Գալով կաշառքների վերաբերմամբ լուրերին, դժուարանում եմ մանրամասնութեանց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԷՆ

—

Երկրի կացութիւնը

Լոնդոն, 31 մարտի

Մեր ընթերցողները կը յիշեն անշուշտ այն երկու թղթակցութիւնները, որ ներկայ ամսուայ սկիզբները նուիրած էի տեղւոյս անգլիացի «Կանանց Հայերու Նպաստամատոյց» կուսակցութեան։ Բօմբէյի պատուակալ գանձապահ տիկ. Մարլըն Քօլ, թարգմանել տուած ըլլալով այդ յօդուածները բարեկամի մը, իր և իր քօմիթէին շնորհակալութիւնը յայտնած էր և այն յոյսը տածած՝ որ հայ ընթերցողներ, կարդալով իրենց հայրենակցին գրածները այս կուսակցութեան գործունէութեան վրայ, թերևս աւելի վստահ աչքով նային անոնց և աւելի պատրաստակամ երևան օժանդակելու։ Որովհետև, ինչպէս թղթակցութեանս մէջ ալ յիշած էի, այս հայասէր կանայք այն կարծիքը ունին, որ մենք իրենց գործին չենք մասնակցիր՝ քանզի կը կասկածինք վրանին՝ օտարներ ըլլալնուն կամ տարբեր կրօնի մը պատկանելնուն համար։ Այդ մտածումը ջանացի, հընար եղածին չափ, փարատել և վստահեցնել զինքը, թէ այդ չէ պատճառը, որ հայեր ձեռնպահ կը մնան համանման գործերէ։

Ուրիշ կէտ մը, նոյնպէս, որ յիշուած էր նախորդ թղթակցութեանս մէջ, կրօնքի խնդիրն է։ Եւ վերջին նամակ մը, որ առաջայ յիշեալ տիկնոջմէ, գիս գրեթէ ամօթահար թողուց։ Այդ նամակով ինձ ուղարկած էր տպագրուած շրջաբերական նամակ մը, որ «Հայաստանի Բարեկամներու» կուսակցութիւնը, ստանալով Էրզրումէն մարտ ամսոյ սկիզբները, իր անդամներուն և այլ հայասէր անձանց կը ղրկէր, որու թարգմանութիւնը պիտի զետեղեմ ներքեւ։ Յանձնելով այդ նամակը ուշադրութեանս և թախանձագին խնդրելով, որ հայոց ուշադրութիւնը ատոր հրաւիրեմ, կաւելցնէր. «Այդ ամերիկացիները բարի, անձնուէր և անշահասէր անձնաւորութիւններ են, բոլորովին ինքզինքնին այդ գործին տուած, և անոնցմէ ոմանց ես անձամբ եմ ծանօթ։ Անոնք հեռու են նոյնպէս կրօնական խըլրտութիւններէ»։

Ի պատասխան ասոր, ես ալ իմ կողմանէ ապահովցի զինքը թէ՝ անգլիացիներուն կամ ամերիկացիներուն դէմ ունեցած անվստահութիւնը չէ, որ հայեր դրամ չեն ղրկեր անոնց, այլ որովհետև իրենք արդէն չափէն աւելի անհատական հոգեր ունին իրենց ընտանեաց, զաւակներուն կամ ծնողաց վերաբերմամբ և աւելի դա է շարժառիթը քան թէ ուրիշ բան։

«Հայաստանի Բարեկամներու» շրջաբերական նամակը, թէև ծանօթ պարագայ մը հայ ընթերցողաց, կարժէ որ անգամ մը ևս յառաջ բերուի, ցոյց տալով միանգամայն այն զգայուն շէշտը, որ այս օտար մարդասէրներ, զոհած իրենց անհատական վայելքներն ու խաղաղ կեանքը, գացած են անապատներու և աւերակներու մէջ ու գթութեան հրեշտակներու նման փրկութեան կը հասնին սովամեռ մանկտիներուն և տարիքոտներուն։ Ահա այդ նամակին թարգմանութիւնը ամբողջովին, Էրզրումէն գրուած, մարտին։

«Թշուառութիւնը ծայրայեղ է ու աւելի կը վատթարանայ։ Քիմոսի (?) և Բասենի մէջ հարիւրաւորներ ալիւր չունին և մի քանին ալ քանի մը օրուան համար միայն ունին։ Շատ մը ընտանիքներ օրական մէկ կերով միայն կապրին, այդ ալ լոկ հաց։ Գարնան համար սերմ չկայ, և, ինչպէս անցեալ տարի, դաշտերէն շատեր անմշակ պիտի մնան։ Հացը սովորականին կրկին գինն է։ Աղքատները ցորեն կարող չեն գնել, հետևաբար գարի ու կորեկ կը գործածեն։ Նպաստը, որ այնքան ազնուօրէն ուղարկեցիք, շուտով վերջացաւ։ Մեր սրտագին շնորհակալութիւնը ատոր համար»։

Ուրիշ կտոր մը։

«Այլևս անկարող եմ երկար յետաձգել ձեզ գրելու և յայտնելու աղաղակիչ պէտքը այս գործին մէջ։ Նախ և առաջ շնորհակալութիւններս կը յայտնենք բոլոր անոնց՝ որոնք առաջին անգամէն յառաջ եկան այս թշուառ ժողովրդին փրկութեան հասնելու։ Թշուառութիւնը բառերով աննկարագրելի է։ Մարդիկ, կանայք և մանկտիք գրեթէ մերկ են այս դաժան ցուրտին. մանուկներ լոկ ցնցոտիով մը իրենց ուսերուն վրայ, և ուրիշ ոչինչ։ Իւրաքանչիւր ձմեռ շատեր կը տանի այս անօգնական փոքրիկներէն։ Բայց այս ձմեռ ոչ միայն պէտք է տոկան ցուրտին, այլ և իրենց դժբաղդ նիհար մարմինները սնունդ ալ չունին։ Ընտանիքներ օրական մէկ անգամ միայն հացի և ջուրի վրայ կապրին։ Մայրեր ամեն օր մեզի կուգան ու կըսեն. «Զաւակնիս հաց կաղաղակեն. ինչ պիտի ընենք»։ Եթէ գործ ըլլայ, որչափ որ հարկ է կաշխատին քանի մը փարայի սիրոյն՝ որպէսզի չոր հաց մը գնեն, և այդ իսկ ամենավար տեսակէն, սև ու յաճախ աւազով խառն, լաւ ցորենի մնացորդները»։

Ահա երրորդ կտոր մը միևնոյն շրջաբերականէն։

«Մէկ գիւղի մը մէջ միայն քսան տուն ընտանիքներ կը սովին։ Անոնք նուաղած են թուլութենով։ Գիւղացիք կուզեն հեռանալ գիւղերէն, բայց կառավարութիւնը չի թոյլատրեր։ Եթէ մէկը փորձէ հեռանալ, մեռցնելու սպառնալով կը ծեծեն և քաշկռտելով ետ կը բերեն զինուորները։ Շարունակաբար հարկեր կը պահանջուին, և եթէ դրամ չունին, իրենց տուներն ու դաշտերը կը ծախուին, նոյնիսկ անկողիններն ու բոլոր շարժուն առարկաները կը տարուին։ Այստեղի կացութիւնը երևակայել անկարելի է։ Ջարդէն աւելի զարհուրելի են ճշմարիտ նկատուելու։ Ժողովուրդը անդադար օգնութիւն կը հայցէ։ Սիրելի բարեկամներ, թող ձեր սրտերը բացուին իրենց աղաչանքին։ Ըցիւ թէ կարողանայի ձեզ այս տուներէն մէկը այցելել տալ, եթէ կարելի է տուն անուանել զանոնք։ Պատուհան չունին, ոտքը թաց հողին վրայ է, որովհետև ձիւնը հալած և ներս է հոսած, ու ի հարկէ յատակ չկայ, ոչ ալ կրակ՝ զայն չորցնելու։ Մարդիկ, կանայք և մանկտիք անկիւն մը խռնուած կը կըծկտին։ Գետինը ածուխի կտոր մը կայ, ուր քիչ մը չոր աղբ վառած են։ Մենք մեր խոշոր վերարկուներով իսկ կը սառինք, իսկ անոնք քանի մը կտոր ցնցոտի միայն ունին վրանին։ Ուտելիք չունին ու սովամահ կըլլան, միշտ վստահելով Աստուծոյ, որ իրենց օգնութիւն պիտի հասցնէ։ Բարեկամներ, չկրե՞ք օգնել մեզ այս թըշուառ տուներուն մէջ պարկ մը ալիւր ձգելու։ Այս խեղճ ժողովուրդը պիտի օրհնէ ձեզ ի փոխարէն և, եթէ հոն ըլլայիք, ձեր մէջ մտնելու, միայն այնքանս կասեմ, որ գիւղերից հաւաքվող կաշառքների դրամները շատ ու շատ անգամ անցնում են այն անձանց կոկորդները, որոնք ամենայն անձնուիրութեամբ և պատրաստակամութեամբ հաւատարմատարի շահաւէտ դերն են ստանձնում: Նման չարիքների առաջն առնելու դիտաւորութեամբ գէթ գիւղացիք պէտք է հետամուտ լինեն իրանց քրտնավաստակ կոպէկներին, որպէս զի այդ կոպէկները բոլորովին աննպատակ չը կորչեն:

---

*) Տես «Մշակ» № 66.

Այսպէս ուրեմն սովի մղձաւանջը աստիճանաբար ցրվում է Ղազախի մռայլ հորիզոնից, գիւղացին իր երեխաների ու անասունների մնացորդի հետ միասին կիսաքուն մօտենում է փրկութեան եզերքին՝ ամառվան, որից յետոյ ապագայ գալիք ձմեռը նոր հոգսերով ու նոյնանման կարիքներով պիտի դիմաւորէ նրան:

Զաք. Ք. Ապրեսեանց

ԹԻՒՐՔԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք—1) Վերխնի-Ուդինսկ քաղաքից (Անդրբայկալեան շրջան), Յարութիւն Մէյրամղուլեանի ձեռքով հանգանակած, հանգուցեալ Շուշանիկ Զհ. Մէյրամղուլեանցի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն 14 ր. 50 կ. (նուիրել են Յ. Մէյրամղուլեան, Յ. Երիցեան, Գէօրգի Բարաթաշվիլի, Վասիլի Ցիխէսելի և Յ. Օտոյեանց՝ 2-ական րուբլի, Հ. Լազինեան, Յ. Տէր-Յարութիւնեան, Զ. Մէյրամղուլեան, Յ. Բաբայեան՝ 1-ական րուբլի և Դ. Եսայեանց՝ 50 կ.), 2) Վլադիվօստոկից, Զ. Յարութիւնեանի և Ս. Գրիգորեանի ձեռքով հանգանակած տեղական հայ գաղութի մէջ՝ 18 ր., 3) Եալտայից, երէցփոխ Յովհաննէս Լազարեանից, հանգանակած տեղական հայ գաղութից և հիւրերից զատկական տօնի առիթով՝ 74 ր. 48 կ. (նուիրել են—Ա. Սպանդարեանց՝ 10 ր., Ն. Ժամհարեանց, Բէրբէրեանց, Ս. Մարգարեանց, Գ. Մուսուրեանց, Ս. Կազէբեանց, Ա. Սարիբէկեան 3-ական ր., Ուլուբէկեանց, Սարգսեանց, Գ. Իզմիրեանց և Յովհաննէս Լազարեանց՝ 2-ական ր., Պոպով, Ս. Բէրբէրեանց, Ս. Նախշունեանց, Մ. Աղարեանց, Գ. Գուդլուեանց, Թ. Գրիգորեանց, Մ. Առաքելեանց, Լ. Մէնդիկեանց, Ս. Յարութիւնեան, Ն. Ամիրխանեանց, Սուշկինեանց, Տ. Ֆրանկով, Ճգնաւոր, Հ. Սեվլիեանց, Տ. Մէրգէլեանց, Ա. Տէր-Խաչատրեանց, Հ. Պոպով, Ս. Ասատուրեանց, Վ. Քամալեանց, Հ. Միգէն և Գ. Երէցփոխեան՝ 1-ական ր., Խնձորեանց, Միխայլեանց, Մանուկեանց, Ս. Խաչատրեանց, Մ. Յակոբեանց, Օ. Ամիրխանեանց, Մ. Աղնաւուրով, Գ. Պոպով, Սադրեանց, Գ. Վարդանեանց, Խրճիեանց, Ա. Խալաթեանց, Ե. Բէնդէրգէ, Լուսիկ, Դէրազիով, Ցէկաեվ, Տ. Ալաջալով, Տ. Մէրգէլով և անյայտ՝ 50-ական կ., Օ. Օհանեանց՝ 60 կ., անյայտ մարդկանցից՝ 7 ր. 27 կ.: Ընդամենը 74 ր. 87 կ., որից փոխադրութեան ծախսը դուրս եկած 39 կ., մնում է 74 ր. 48 կ.):

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Յիշեցնում ենք, որ այսօր, Թիֆլիսի արտիստական ընկերութեան թատրոնում, Աւճալեան թատրոնի դրամատիկ սիրողների խումբը, յօգուտ հայ տնայնագործական ընկերութեան, ներկայացնելու է Սումբատովի յայտնի «Измѣна» դրաման: Թիֆլիսի հայ տնայնագործական ընկերութիւնը դեռ նոր է ոտք դնում իր ապագայ ընդարձակ գործունէութեան առաջին շրջանը: Սակայն իր կարճատև նախնական գոյութեան ընթացքում էլ նա երևան է հանել մի նկատելի և արդիւնաւէտ աշխատանք, բանալով իր կրթական ջուլհականոց-արհեստանոցը, ուր տնայնագործական արհեստում վարժվում են մի քանի գեղջուկ երկսեռ երեխաներ: Ընկերութիւնը այժմ նպատակ ունի բաժանմունք բանալ մի որևէ գիւղաշրջանում: Թէ ընկերութեան հանրօգուտ նպատակը և թէ նրա դրամական վերին աստիճանի սուղ միջոցները կարծում ենք կը դրդեն հայ հասարակութեան նպաստել ներկայացման աջողութեանը:

◆ Թէ Թիֆլիսում և թէ Կովկասի միւս քաղաքներում մայիսի 1-ը անցաւ բոլորովին հանգիստ: Ամեն տեղ աշխատանքները սովորականի նման շարունակվում էին:

◆ Ինչպէս գիտեն ընթերցողները, Պետական Դումայի անդամ Չխէիձէն զատկական տօներին եկել էր Թիֆլիս: Նա ժողովել է բազմաթիւ տեղեկութիւններ և փաստեր, որոնցով առարկելու է աջակողմեաններին, երբ սրանք Դումայում կրկին շարունակեն իրանց հարցապնդումները Կովկասի բարձր իշխանութեան անգործունէութեան, գաղթականութեան, տեղական ինքնավարութեան և այլ խնդիրների մասին: Աջակողմեանների հարցապնդումը Կովկասի մասին քննվելու է մայիսի կէսերին: Հարցապնդումը կազմելու վրա աշխատում է Պետերբուրգում Շավրօվը, որ կովկասեան շերամապահական կայարանից հեռացվեց. իսկ իբրև հռետորներ Դումայի նիստերում հանդէս են գալու Պուրիշկեվիչը և Տիմօշկինը: («Յ.»)

◆ «Ցխովրեբիս Սարկէ» վրաց լրագրի ասելով, Գուրիայի իշխանութիւնը յայտնել է ազգաբնակութեան, որ ճանապարհների պաշտպանութեան համար և առհասարակ աւազակութիւնների դէմ կռիւ մղելու համար՝ շինական հասարակութիւններին իրաւունք է տրվում իրանց միջից 20—25 մարդ ընտրել: Կառավարութիւնը այդ մարդկանց զէնք կը տայ: Մի քանի հասարակութիւնների մէջ արդէն այդպիսի մարդկանց ընտրել են:

◆ Թիֆլիսի գաւառական մասնաժողովը մինչև այժմ ձեռք է բերել և արդէն բաժանել է Թիֆլիսի գաւառի կարիքաւոր ազգաբնակութեան 22,500 պուդ ալիւր: Մասնաժողովը դիւանական ծախքեր կատարել է 2215 ր. 35 կ.:

◆ Թիֆլիսի նահանգական մատակարարական յանձնաժողովը յայտնել է Թիֆլիսի գաւառական մատ. մասնաժողովին, որ նա Թիֆլիսի գաւառի կարիքաւոր ազգաբնակութեան համար պահանջվող հացի քանակը որոշել է 48,375 պուդ: Այս թւի մէջն է նաև այն հացը, որ կարող է մասնաժողովը ձեռք բերել արդէն յատկացված 17,000 րուբլով:

◆ Թիֆլիսի բելգիական փոխ-հիւպատոս Այվազեանը բարձրագոյն կարգադրութեամբ նշանակված է Բագուի բելգիական հիւպատոս: Նրա իրաւասութիւնը տարածվելու է Բագուի և Գանձակի նահանգների, Դաղստանի շրջանի և Ղուբայի գաւառի վրա:

◆ Կովկասեան զինւորական-նահանգական դատարանը, քննելով գիւղացի Խավտասու գործը, որ մեղադրվում էր անդրկ. երկ. օբէր-կօնդուկտօր Լուկասի կնոջ և զինւոր Պրօշչէյի սպանութեան մէջ, մեղաւոր ճանաչեց նրան և դատապարտեց մահվան պատժի կախաղանով:

◆ Հինգշաբթի, մայիսի 1-ին, Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ կայացաւ մի խորհրդակցութիւն, որին մասնակցում էին քաղաքային վարչութեան բոլոր անդամները, Թիֆլիսի ոստիկանապետը, բաղնիքների տէրերը, կապալառուները, բանուորները և քիսաչիները: Քննութեան նիւթն էր բաղնիքների պահպանման և նրանցից օգտվելու համար պարտադիր որոշումներ մշակելու խնդիրը: Նախագահ ընտրվեց քաղաքագլուխ իշխան Ձերքեզովը: Մտքերի երկար փոխանակութիւնից յետոյ, որոշվեց. 1) ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը բաղնիքները բանալ առ. ժամը 6-ից մինչև գիշերվայ ժամը 12-ը, 2) հոկտ. 1-ից մինչև ապր. 31-ը՝ առ. ժամը 7-ից մինչև գիշերվայ ժամը 12-ը, 3) կիրակի և տօն օրերը բանալ առ. ժամը 6-ից մինչև ցերեկվայ ժամը 2-ը, 4) երկու փոխարինումն (սմէնա) հաստատել ծառայողների և քիսաչների համար: Բացի յիշեալ որոշումներից, խօսակցութիւններ եղան նաև մաքրութեան և այլ հարցերի մասին:

◆ Ինչպէս մեզ հաղորդում են, Պարէչեվի ծննդկանների կասսայի անդամները, իւրաքանչիւր րուբլուց ստանալով 50 կոպէկ, մտադիր են դիմել երկրիս բարձր իշխանութեան և խնդրել՝ ազդել որևէ ճանապարհով Պարէչեվի վրա, որպէս զի նա վերադարձնէ եթէ ոչ ամբողջ րուբլին, յամենայն դէպս իւրաքանչիւր րուբլուց 80 կոպէկ:

◆ Թիֆլիսի առևտրական բանկի անդամների ընդհանուր ժողովում, ի միջի այլ խնդիրների, որոշվել է բաժանմունքներ բանալ և այդ նպատակով ժողովը յանձնել է բանկի վարչութեան՝ միջնորդութիւն յարուցել ֆինանսների մինիստրութեան առաջ:

◆ Երկրագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարչի Կովկասի լիազօրը երկրագործութեան գլխաւոր վարչութեան առաջ միջնորդութիւն է յարուցել, որ կովկասեան գիւղատնտեսական ընկերութեանը պետական գանձարանից 6000 րուբլի նպաստ տրվի այս տարվայ համար:

◆ Ստացանք «Հասկեր» մանկական պատկերազարդ ամսագրի № 4-ը՝ «Մանկական հոգին» և «Կաքաւի երգը» (ձայնագրված Կոմիտաս վարդապետի, բանաստեղծութիւն Յ. Թումանեանի) յաւելուածներով:

◆ Թիֆլիսի ոստիկանապետը առաջարկել է բոլոր պրիստաւներին կարգադրութիւն անել, որ ոստիկանութեան պաշտօնեաները աջակցեն էլեքտրաքարշի կօնդուկտօրներին, երբ սրանք վագօններից իջեցնում են սահմանված թւից աւելի նստողներին կամ թէ արգելում են հարբածներին էլեքտրաքարշ նստել:

◆ Մայիսի 1-ից Թիֆլիս-Բօրժոմ երկաթուղագծի վրա երթևեկում են երկու զոյգ ամառային գնացքներ:

◆ Մայիսի 24-ին նշանակված է ռուսական տեխնիքական ընկերութեան կովկասեան բաժանմունքի նիստը:

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը սիֆիլիսային հիւանդանոցի համար ընտրել է մի տեղ Վելիկօկնեաժսկի փողոցում երկրորդ արական գիմնազիայի կից: Իմանալով այդ մասին, թէ այդ փողոցի բնակիչները և թէ գիմնազիայի վերատեսուչը միջնորդել են, որ քաղաքային վարչութեանը արգելվի այդպիսի «հաստատութիւններ» հիմնել կրթական հաստատութեան կից:

◆ «Մշակի» երէկվայ համարում մի սխալ է սպրդել. վերջին տեղեկութիւնների մէջ փոխանակ Կրեատ կղզու, տպված էր Կիպրոս կղզի:

◆ «Մշակի» № 86-ում տպված Գանձակի նամակի մէջ գրված է՝ «երէցփոխան Ն. Մամիկոնեանի տրամադրութեան տակ»: Պէտք է լինի՝ «երէցփոխան Պ. Մանգասարեանի տրամադրութեան տակ»:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ապրիլի 30-ին մի 12-ամեայ երեխայ, կամենալով էլեքտրաքարշ նստել, կօնդուկտօրից նկատվելով, իջնում է վագօնից, չը նկատելով հէնց այդ պահին հակառակ կողմից եկող կառքը. կառքը անցնում է դժբաղդի վրայով և նրան ջարդում է: Կառապանը ձերբակալված է:

◆ Մայիսի 1-ին Դեսիմօնովսկի հրապարակում Թիֆլիսեցի Ալէքսանդր Սխիրտլաձէի կօշիկների արհեստանոցն է մտնում Զուգդիդի գաւ. բնակիչ Գրիգոր Շուլեան և ատրճանակից մի քանի անգամ կրակում է Սխիրտլաձէի և արհեստանոցում այդ պահին գտնվող Արամ Կամանջեանի վրա և վիրաւորում է վերջինին: Շուլեանին ձերբակալում են: Սխիրտլաձէի ասելով, նա եկել էր փող պահանջելու:

◆ Մայիսի 1-ին Անէնսկի փողոցում ապրող Թիֆլիսեցի Խաչօ Խօջաէվի բնակարանից նրա բացակայութեան ժամանակ անյայտ չարագործներ գողացել են 103 րուբլու իրեր:

◆ Դուչէթի փողոցում ապրող Մագդալինա Դավիդօվնայի տուն մայիսի 1-ին մտնում են երեք չարագործներ փող պահանջելու նպատակով. սակայն մերժում ստանալով, նրանք դուրս են գալիս և անյայտանում:

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ «Բագուի նաւթարդիւնաբերական ընկերութեան» ակցիաները 570 րուբլուց 440 րուբլու իջնելու պատճառով, վարչութիւնը, «Русь» լրագրի ասելով, հարկադրված է այլևս նոր ակցիաներ բաց չը թողնել:

◆ Սուրբ Նինայի աղջկանց դպրոցի VII դասարանի աւարտման քննութիւնները վերջանալու են յունիսի 3-ին, իսկ միւս դասարանի քննութիւնները, ուսումնարանական շրջանի հոգաբարձուի առաջարկութեամբ, մայիսի կէսին:

◆ Քաղաքային տղայոց պրոգիմնազիայի ծնողական ժողովը և մանկավարժական խորհուրդը դիմել են ներկայումս Բագւում գտնվող շրջանային տեսուչ Լօպատինսկուն՝ խնդրելով աջակցել իրանց պրոգիմնազիայի V դասարանը բաժանելու համար թոյլտուութիւն ստանալ, որովհետև ներկայումս IV դասարանը աւարտող 52 աշակերտները ուղղակի դատապարտված են փողոց նետվելու, քանի որ Ալէքսանդր III-ի գիմնազիայում ազատ տեղ չը լինելու պատճառով չեն կարող ընդունվել:

◆ Ապրիլի 29-ի երեկոյեան ժամը 8-ին, երբ Ա. Մ. Գեօղակօվը կառքով մօտենում էր իր բնակարանին, որ գտնվում է Արմեանսկայա փ. № 46 տանը, այդ միջոցին յայտնի չէ ով ատրճանակ է պարպում նրա վրա և գնդակով վիրաւորում նրա ձախ թևը արմուկից: Կրակողը անյայտացել է: Մահափորձի պատճառը յայտնի չէ: Վիրաւորին, վէրքը Միքայէլեան հիւանդանոցում կապելուց յետոյ, փոխադրել են իր բնակարանը:

ԼՈՒՐԵՐ ԲԱԹՈՒՄԻՑ

◆ «Бат. Голосъ» լրագրի № 94-ի մէջ տպագրված է Արաքսիա Բ. Դանիէլեանի հետևեալ նամակը.—«Ողորմած տէր, պ. խմբագիր: Ձեր խմբագրած լրագրի № 92-ի մէջ լոյս տեսաւ մի դիտողութիւն այն մասին, թէ քննիչ իշխանութիւնը վերջապէս գտել է ուղին, ի յայտ ածելու մեղաւորներին, որոնք գազանաբար սպանել էին իմ անբաղդ ամուսին՝ Գ. Մ. Դանիէլեանցին: Սրա հետ միասին լրատուն, ընդգծելով այս ամենը, ասում է, որ այս գործում, ի թիւս այլոց, ես և ես պատասխանատուութեան եմ կանչվում իբրև մեղադրվող: Ճշմարիտ է, մարդասպանների կողմից ընտրված պարագաները, որոնց մէջ տեղի է ունեցել այս սոսկալի սպանութիւնը, այնպիսիներ էին, որ իրաւաբանօրէն ես չէի կարող չը կասկածվել իբրև մասնակից այս չարագործութեան, բայց իբրև մեղադրվող պատասխանատուութեան կանչվելս դեռ չի նշանակում, թէ ես արդէն քննական իշխանութեան կողմից ճանաչված եմ ինձ վերագրած յանցանքի մէջ մեղաւոր: Մէկը, ինչ-որ մակաբերութիւններից դրդված, ցանկալով վերջ դնել իմ մարդու կեանքին, այնքան նենգօրէն է սարքել եղեռնագործութիւնը, որ պարզ կերպով երևան է գալի նրա ցանկութիւնը հիմն ի վեր տապալելու իմ անունը, բայց ես ամենևին չեմ կասկածում, որ, եթէ գոյութիւն ունի արդարադատութիւնը, այն չարագործը, որը սպանել է իմ մարդուն, ի յայտ կը գայ, և այնքան անխղճօրէն իմ պատւին շպրտված բիծը կը մաքրվի»:

◆ Մի խումբ ուսուցիչ և ուսուցչուհիներ գովելի եռանդով շարունակում են ձրի պարապել գիշերային դասընթացքներում հասակաւոր սովորողների հետ: Պարապմունքները տեղի են ունենում հայոց եկեղեցական դպրոցի շէնքի մէջ. սովորում են 200-ից աւելի տարիքաւոր անձեր: Սկզբում գրվելիս՝ կանանց թիւը մեծ է եղել, բայց յաճախում են քչերը՝ անշուշտ շէնքի տեղի կողմից անյարմարութեան պատճառով:

◆ Վերջին ժամանակներս քաղաքումս յամառ լուրեր էին պտտում, մինչև անգամ տեղական ռուսաց թերթի մէջ էլ լոյս տեսան, որ իբր թէ Բաթումի գիմնազիաների վերատեսուչ Գերց պաշտօնից հեռացվում է: Բայց ի մեծ ցաւ սուտ դարանագործների և ի մեծ ուրախութիւն ամենքի յայտնվեց, որ լուրերը զուրկ էին հիմքից և Ր. Ի. Գերց մնում է իր պաշտօնում:

◆ Անցեալ կիրակի օրը նշանակված էր ժողովրդական զբօսանք յօգուտ քաղաքային դպրոցի աշակերտների. սակայն անձրևոտ եղանակի պատճառով յետաձգվեց առաջիկայ կիրակի:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Չելեաբինսկից հեռագրում են, որ Զատկի շաբաթվայ ընթացքում տեղական գաղթականների մէջ խոլերա է երևացել. հիւանդներին խնամք տանող գթութեան քոյրերից մէկը հիւանդացել է և բերված է Չելեաբինսկ:(«Сов. Сл.»)

◆ Առաջին համառուսական կօօպերատիվ համագումարի կազմակերպչական կօմիտէտը ներկայումս կազմում է մի մանրամասն զեկուցում համագումարի թէ ընդհանուր և թէ սեկցիաներում ու մասնաժողովներում կատարված բոլոր աշխատանքների մասին՝ ներքին գործերի մինիստրին ներկայացնելու համար: Զեկուցման նպատակն է ապացուցանել, որ իր բոլոր աշխատանքների ժամանակ համագումարը խիստ կերպով ղեկավարվել է թոյլատրված ծրագրով և խուսափել է քաղաքական ու կուսակցական հարցերից, ուստի և քաղաքապետի արգելքը՝ քննութեան ենթարկելու զուտ տնտեսական, գործնական և կենսական առօրեայ հարցերը, որ հարկադրեց համագումարին վերջ տալ իր պարապմունքները և պատճառ եղաւ փակման, բոլորովին հիմք չունի:

◆ Ինչպէս հաղորդում է «Слово» լրագիրը, ներքին գործերի մինիստրութիւնը առաջարկել է ներքին գաւառների նահանգապետներին ստուգելու՝ ճշմարիտ է, արդեօք, որ հրէայ արհեստաւորները գիտեն այն արհեստը, որպիսին յիշված է՝ նստակեցութեան սահմաններից դուրս ապրելու իրաւունք տուող՝ վկայականների մէջ:

◆ «Свободныя Мысли» թերթը հարց է տալիս՝ թէ ո՞րտեղ են այն դրամները, որ 1904 թւին «Русь» լրագիրը հաւաքում էր ժողովրդական լուսաւորութեան ֆօնդի անունով:

◆ Յայտնի հրատարակիչ Սիտինը 3000 րուբլի տուգանքի է ենթարկված Ամֆիտէատրովի գրուած «Ֆանտաստիքական ճշմարտութիւններ» աշխատութիւնները հրատարակելու համար:

◆ Բարօն ֆօն-Ռանկը աքսորվել է Պետերբուրգից, ներքին գործերի մինիստրութեան կարգադրութեամբ մուրացկանութեամբ պարապելու համար: («Р. В.»)

◆ Սօցիալ-դեմօկրատական ֆրակցիային տեղեկագիր է ուղարկված՝ Սօլվիչեգօդսկում ոստիկանների ձեռքով քաղաքական աքսորականներին ջարդի ենթարկելու մասին, որի պատճառը եղել է այն, որ աքսորականները հաւաքվել են միասին խնդրելու, որպէսզի իրանց նպաստ տրվի հագուստի համար: («Русь»)

◆ Կուբանի գեներալ-նահանգապետ Բաբիչը, «Терекъ» լրագրի ասելով, հրատարակել է հետևեալ պարտադիր որոշումը. «Ես նկատել եմ, որ շատերը սուտ լուրերից վախեցած, իսկ ուրիշներն էլ ուղղակի համակրանքից դրդված վճարում են կողոպտիչներին և դրամաշորթներին զանազան տեսակ, երբեմն նոյնիսկ խոշոր, գումարներ՝ առանց այդ մասին զեկուցանելու տեղական իշխանութիւններին և, յայտնապէս, հանդիսանում են նրանց հովանաւորողներ, թագցնողներ: Այդ պատճառով յայտարարում եմ բոլորին ի գիտութիւն, որ դրամաշորթներին փող վճարելու համար յանցաւոր համարվողները իմ կողմից ադմինիստրատիվ կարգով կենթարկվեն 3000 րուբլի տուգանքի կամ մինչև 3 ամսվայ բանտարկութեան»:

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը յատուկ շրջաբերականներով առաջարկել է նահանգապետներին պարտաւորեցնել զեմսկի կառավարիչներին ու ստանովօյ պրիստաւներին ամեն մի յարմար դէպքում զրոյցներ ունենալու ժողովրդի հետ մասնաւոր սեփականութեան անձեռնմխելիութեան մասին:

◆ Հելսինգֆօրսի (Ֆինլանդիա) բանուորական միութիւնը հրաւիրել էր Բեբելին գալ Հելսինգֆօրս և ճառախօսել այնտեղ միութեան օգտին կազմակերպվելիք հանդէսների ժամանակ: Բեբելը մերժել է:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Նիստ ապրիլի 29-ի

Նիստը բացվում է ժամը 11 և 12 րոպէին: Նախագահում է Խոմեակովը:

Կարդացվում են արդարադատութեան մինիստրի ներկայացրած օրինագծերը՝ բանտային պահակախմբերի պահպանման ծախքերը տարին 345,000 րուբլով աւելացնելու, բանտարկեալների և բանտային շինութիւնների պահպանութեան ծախքերը վճարելու համար 180,200 րուբլի յատկացնելու, բանտային շինութիւններ կառուցանելու և անշարժ կալուածքներ ձեռք բերելու համար 1,700,000 րուբլի յատկացնելու մասին:

Բոլոր օրինագծերը հերթական են ընդունվում:

Հերթում դրված է ներքին գործերի մինիստրութեան ելևմտի նախահաշիւը, որ կազմել է բիւջէտային մասնաժողովը:

Իբրև զեկուցանող, Գօլօլօբօվի հիւանդութեան պատճառով, հանդէս է գալիս Վետչինինը և վկայում է, որ նախահաշիւը կազմված է վերին աստիճանի հիմնական կերպով, ժողովրդական իւրաքանչիւր կոպէկը խնայելով, ուստի և հարկաւոր է հաստատել շատ աննշան փոփոխութիւններով: Միևնոյն ժամանակ մասնաժողովը անհրաժեշտ է գտնում Դումայի ուշադրութիւնը հրաւիրել այն իրանց դարն արդէն անցրած օրէնքների վրա, որոնք չեն արդարացնում իրանց նշանակութիւնը ժամանակակից պետական կազմում:

Սկսվում են ընդհանուր վիճաբանութիւնները: Գրվում են 28 հռետօրներ:

Մակլակօվը գտնում է, որ Դումայի կողմից աններելի ձևականութիւն կը լինէր, եթէ ներքին գործերի մինիստրութեան նախահաշիւը քննելու ժամանակ նա բաւականանար թւանշանները հաշւապահական ձևով բաղդատելով և բիւջէտային մասնաժողովի ընդունածը ընդունելով, այսինքն թէ մինիստրութեան ծախքերի $95^0/_0$-ը անշօշափելի է: «Ես հասկանում եմ, որ այդ հարցը ընդունակ է անսպառ վէճեր և անսպառ կիրք յարուցանելու այստեղ: Ես բնաւ նպատակ չունեմ սրել տրամադրութիւնը: Զգօնութեամբ, որ վայել է խոշոր հարցերին, կաշխատեմ Դումայի ուշադրութիւնը դարձնել այն ահարկու վտանգի վրա, որը մեզ բոլորիս, առանց կուսակցութիւնների խտրութեան, սպառնում է այս գործում, սպառնում է նրան, որին մենք ծառայելու եկանք այս դահլիճը, սպառնում է մեր մեծ Ռուսաստանի վերածնութեան և վերակենդանութեան:

«Ներքին գործերի մինիստրութիւնը մեր պատմական պրօցէսում միջամտել է ոչ միայն բնակիչների առօրեայ ամբողջ կեանքում, նա միջամտել է միւս մինիստրութիւնների և վարչութիւնների նօրմալ գործունէութեան մէջ: Ահա ինչու, երբ մենք դեռ համբերաչափ կաբինէտ չունէինք, երբ մենք պրեմիէրներ չունէինք, բնակիչների լեզուն միանգամայն իրաւացի կերպով մեր քաղաքականութիւնը շրջանների էր բաժանում, կապելով նրանց ներքին գործերի մինիստրների անուններով:

«Հոկտեմբերի 17-ի մանիֆէստից յետոյ, որ նոր դարագլուխ բացեց, ներքին գործերի մինիստրութիւնը պէտք է արմատապէս վերանորոգվէր, որովհետև հոկտ. 17-ի մանիֆէստով այնպիսի սկզբունքներ ազդարարվեցին, որոնց այդ մինիստրութիւնը ամբողջ ժամանակ բացասում էր: Սակայն պա-

---

ձեռքերն ու ոտքերը համբուրէ երախտագիտութիւնով: Բաւական դժուար է տեսնել մարդիկ և կանայք այսպիսի կացութեան մէջ, բայց երբ տարփելի փոքրիկներ, անօգնական ու առանց հասկացողութեան, նոյնպէս կը դատապարտուին այդ բաղդին, չափազանց զարհուրելի կը թուի: Կը հայցենք որ նպաստը շուտով հասնի»:

Այս օտարին գրչով գրուած կցկտուր նախադասութիւններէն վերջ, մեր կողմէն բառ աւելցնել անօգուտ է: Եթէ մարդիկ այդ լեզուէն չեն հասկնար, ուրիշ լեզուով հասկնալու ընդունակ չեն: Ինձմէ խնդրուած է կոչ մը ընել հայ ընթերցողին և արձագանք տալ նամակի աղերսին: Ով որ սիրտ ունի, ով որ մայր, քոյր, ամուսին, զաւակ և մտերիմ ունի, ով որ հայ է և մարդկային սիրտ կը կրէ, թող պատասխանէ այս պաղատական կոչին և իր աջակցութիւնը չզլանայ: Չարիքը անհուն է և դիմադրելու համար հարկաւոր է միացած հսկայ ոյժ: Զթերանանք: Աչքի առաջ ունենանք այս դաժան ցուրտին ու փուքին սովալլուկ գալարուող փոքրիկ մանուկները, մերկ պատանիները, ցնցոտիաւոր կանայք և մարդիկ և ատոր համեմատ շարժինք:

Գիտենք թէ ատի թշուառութեան լուծումը չէ. թէ ատիկա չարիքը կէս ճանապարհէն միայն կը դիմադրէ: Սակայն այսպիսի դէպքերու մէջ փիլիսոփայելու ժամանակ չկայ: Երբ մէկուն խեղդուիլը տեսնենք՝ փրկութեան հասնելէ առաջ ջուրին կամ լողալուն ձևերուն վրա թէօրիներ չենք կազմեր, այլ կը ցատկենք և կը փրկենք վտանգի ենթարկուողը: Նոյն կերպով գործելու հարկ է նոյնպէս հիմա: Այս է մեր հաւատքը, ինչ ալ խորհին ուրիշներ:

Դեռ այսօր միայն Վանէն հեռագիր մը կը հաղորդէ նոր կոտորած մը, 30 հոգի սպաննուած: Իբր թէ ֆրանսական, ռուսական և անգլիական հիւպատոսներ (վերջինոյն chargé d'affaire-ը) կը դիմեն մեծ եպարքոսին և պաշտպանութիւն կը խնդրեն և որպէս թէ եպարքոսն ալ անմիջական հեռագիր կուտայ, որ քանի մը գունդ զրկուին Վան՝ հայերը պաշտպանելու համար: Ցաւալին հոն է, որ այդ հրամանէն քիչ վերջ աւելի մեծ ոճիրներ կը գործուին և եւրոպացի դերասանները կը փորձեն դերերնին կրկին խաղալ սկիզբէն:

Ուրեմն, կը տեսնէք թէ անոնց վրայ վստահելով եթէ թողունք որ սովամերկները սպասեն, այդ սպասումը կարծուածէն շատ աւելի երկար կըլլայ, և բնութեան օրէնքներուն դէմ երկար պայքարել՝ անկարելի է:

Ուրեմն, օգնեցէք, ինչ կերպով որ կրնաք, այս անտիրական, անտուն ու անոք թշուառները սովի ճիրաններէն փրկելու:

Մինաս-Ցոլակ

թև մտքի և առաւել մարդարէական խօսքեր էին այն խօսքերը, որ ասվեցին հոկտ. 17-ի մանիֆէստի հրատարակութեան հետ միաժամանակ թէ՝ «Շատ և շատ ժամանակ կանցնի, մինչև որ նոր գաղափարները կը թափանցեն և հասարակութեան բարքերի մէջ, և՛ կառավարելու եղանակի մէջ»։

Անդրբարենորոգման շրջանում մեր ամբողջ քաղաքականութիւնը յանգեց այն կէտին, որ Պետերբուրգը սիստեմատիկ կռիւ յայտարարեց տեղերի հետ, իսկ ներքին գործերի մինիստրութիւնը՝ ինքնագործունէութեան բոլոր ձևերի դէմ։ Հին կարգի գաղափարը պատերազմի սիստեմն էր, և ո՛չ կառավարելը, իշխանութեան կռիւը՝ հասարակութեան դէմ։ Երբ պատերազմում են, երբ երկրի գրաւումն կամ նրա մէջ կարգ ու կանօնի հաստատումն է տեղի ունենում, այն ժամանակ տիրապետում է ոչ թէ իրաւունքը, ոչ թէ օրէնքը, այլ յատուկ մի իրաւունք, ուժեղի իրաւունքը, և հէնց այդտեղից էլ և հէնց այդ պատճառով էլ ստեղծվեց այդ կործանիչ լօզունգը, որ արդարութեան իրաւունքի և օրէնքի սկզբունքներին կարելի է հակադրել պետական անհրաժեշտութիւնը։

«Եւ ահա, հոկտ. 17-ից յետոյ, ամեն բան փոխվեց. այսպէս, այն գաղափարները, որոնք հալածվում էին, մեր քաղաքականութեան նոր սիւներ յայտարարվեցին. օրինականութիւնը, որ ընդունվում էր միայն այն չափով, ինչ չափով որ նա օգնում և չէր խանգարում իշխանութեան, պետական կառավարութեան անպայման սկզբունք յայտարարվեց։ Այն ժամանակ կատարվեց այն, ինչ որ չէր կարող չը կատարվել. վարչական անձերից նրանք, որոնք ծառայում էին այն սկզբունքներին, որոնց այժմ հարկ եղաւ դէն ձգել, զէնքերը վայր դրին, հեռացան և իրանց տեղը զիջեցին նոր մարդկանց, նոր գաղափարներին. միւսները օգտվեցին այն իշխանութիւնից, որը գտնվում էր իրանց ձեռքում, որպէսզի այդ իշխանութիւնով կռիւ սկսեն անցեալի սկզբունքների դէմ։

«Մենք առպակվեցինք յեղափոխական հընոցի մէջ, ապա ունեցանք հանգստութիւն, իսկ այժմ ապրում ենք հասարակական ռէակցիայի մէջ և կարող ենք հարց տալ մեզ թէ արդեօք մօտեցել ենք այն բանին, որ կարողանանք ասել, թէ Ռուսաստանը ամբողջապէս իր բոլոր վարչութեամբ դըրված է մի սկզբունքի վրա, արդեօք կատարվեց այն, ինչ պէտք է կատարվէր, արդեօք տեղի ունեցաւ նոր սկզբունքների իրագործումը հին վարչութիւնների կողմից։ Հարկաւոր չէ կուսակցական մարդ լինել, հարկաւոր չէ կիրք մտցնել այդ հարցի մէջ, հարկաւոր է միայն առանց կուսակցական կողմնապահութեան հարցը դնել իր ամբողջ լայն ծաւալով, տեսնելու համար, որ այդ բանը չէ կատարվել։ Նոր սկզբունքներն են իրաւական, ներկայացուցչական վարչութեան սկզբունքները։ Նրանք յաղթանակ են տարել միայն կենտրոնում։ Այո, Տաւրիկեան պալատում մենք մեզ զգում ենք նոր պայմանների մէջ, տեսնում ենք այստեղ, որ երրորդ Դուման չէ կորցրել այստեղ իրան պատկանող իրաւունքները, նա սիստեմատիկաբար մեծացնում է իր իրաւունքները։ Մենք ողջունում ենք նրան իր այդ գործունէութեան համար։ Այդ մենք տեսնում ենք այստեղ, կենտրոնում։ Սակայն Տաւրիկեան պալատը կարծես թէ երկրից անջատված մի կղզի է։ Այդ բոլոր սկզբունքները անհետանում են, մոռացվում են, հէնց որ նրա պատերից դուրս են գալիս նրանք և մտնում են կեանքի մէջ. մենք տեսնում ենք, որ կայ մի անհաշտ բան նրանում, ինչ որ այստեղ է խօսվում, և այն բանի մէջ, ինչ որ կատարվում է երկրի զանազան մասերում, տեսնում ենք, մի ֆորմուլայի վերածելով, որ հակասութիւն կայ ֆորմուլայի մէջ Ռուսաստանում և նրա վարչութեան ձևերի միջև, տեսնում ենք, որ որքան աւելի է աճում Դումայի հեղինակութիւնը կենտրոնում, որքան աւելի Դուման դադարում է կռւելուց իր գոյութեան համար, որքան աւելի Դուման դառնում է մի օրգան, որը ուղղութիւն է տալիս քաղաքականութեանը, այնքան աւելի երկրի զանազան մասերում զգում են զանազանութիւն այն բանի մէջ, թէ Դուման ինչ ձեռք բերեց, և այն բանի մէջ, թէ այդ Դումայից ինչ ստացան տեղական մարդիկ։ Որքան գնալով անհետանում է հասարակական ռէակցիան, որն այնքան բնական է և անխուսափելի, որքան երկրի զանազան մասերում հարց են տալիս միմեանց, թէ վերջապէս ինչ ստացան նոր կարգերից, այնքան աւելի սուր բնաւորութիւն է ստանում զանազանութիւնը և հակասութիւնը կառավարութեան ձևի, հէնց իրան Դումայի գոյութեան և վարչութեան գործողութիւնների միջև։ Հասել է վերջապէս ժամանակ մատնացոյց անելու այդ բանը, ընդգծելու, կռւելու դրա դէմ, որովհետև այդտեղ վտանգ կայ ոչ միայն կուսակցութեան համար, այլ ամբողջ Դումայի համար. դրանից վտանգվում է ամբողջ Ռուսաստանի բարգաւաճումը և բարօրութիւնը։ Ինձ չեն հակաճառի, եթէ ասեմ, որ իր հիմնական սկզբունքներում վարչութիւնը տեղերում մնացել է նախկինը։ Ճանաչված է օրինականութեան սկզբունքը, բայց ինչ ենք մենք տեսնում երկրի զանազան մասերում։ Երկրի զանազան մասեր ասելով, ես չեմ ուզում խօսել այն գործողութիւնների մասին, որոնք գաղտնի են կատարվում, հալածվում են, ակներև յանցանքներ են։ Յանցանքներ ամեն տեղ կարող են լինել. սակայն կեանքը, որ ես տեսել եմ, ամենևին չէ հիասթափեցրել ինձ այն համոզման մէջ, որ մեր իշխանութիւնը յեղափոխութեան դէմ կռիւ մղելու ժամանակ չը պէտք է փոխ առնէ այդ յեղափոխութեան մեթօդները, գործելակերպը և փիլիսոփայութիւնը։ Ես կը խօսեմ միայն առօրեայ, սովորական կեանքի մասին։ Առաջին բանը, որը ակներև ճշմարտութիւն է, որովհետև նրա մասին շատ խօսեցին, որի մասին չէ կարելի չը խօսել, դա արմատական հակասութիւնն է օրինականութեան գաղափարը յայտարարելու մէջ կենտրոնում և նրա միջև, որ Ռուսաստանի մեծ մասը գտնվում է օրինականացրած ապօրինութեան ռէժիմի մէջ։ Այդ ռէժիմը մտցվում է որպէս հիմք, որպէս պետական վարչութեան նորմա։ Եթէ նայէք թէ ինչ են կատարում արտակարգ պաշտպանութեան հիման վրա, ի հարկէ կը տեսնէք, որ նրանց գոյութեան պատճառը միայն կրամօլան չէ։ Արտակարգ ուժեղացրած պաշտպանութեան օրէնքները, որքան էլ դրանք օտարոտի երևան, սկսվեցին գլխաւորապէս գործադրվել մամուլի դէմ։ Արդեօք թէ՞ բոլորը, ինչ կատարվում է պաշտպանութեան անունով։ Որտեղ կամայականութիւն կայ, այնտեղ են անպատճառ և զեղծումները։ Կարելի է ասել, որ զօրեղացրած պաշտպանութիւնը գոյութիւն ունի ոչ թէ կրամօլայի դէմ կռւելու համար, այլ որպէսզի հնարաւորութիւն լինի օրէնքով եւ խախտել օրէնքը, և իբր թէ վերականգնել հոկտեմբերի 17-ի խախտած կարգը։ Եթէ ըմբռնենք այն նշանակութիւնը, որ մամուլն ունի հասարակութեան շըրջերի վրա, եթէ հասկանանք այն ամենը, ինչ արտացոլում է, ինչ շօշափում է մամուլը, այն ժամանակ բոլորը կը զգան և կը տեսնեն, թէ չէ կարելի դրանից աւելի մեծ պրօպագանդա անել, չէ կարելի դրանից աւելի քարոզներ կարդալ, քան այն միջոցը, որ ուղղված է մամուլի դէմ. դուք տեսնում էք, որ այստեղ ապրող բնակիչների աչքն է ընկնում, այն է, որ արտակարգ և ուժեղացրած պաշտպանութեան շնորհիւ վերացված է հոկտեմբերի 17-ի մանիֆէստը այն մասում, որ վերաբերում է մամուլին։ Կրճատում եմ իմ ասելիքները և չեմ խօսի այն մասին, ինչ կատարվում է արտակարգ և ուժեղացրած պաշտպանութեան հիման վրա, ինչ կատարվում էր, օրինակ, ընտրութիւնների ժամանակ»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ախալցխա, 29 ապրիլի

Տեղիս դպրոցների մի խումբ ուսուցիչներ՝ Ներսիսեան, Տէր-Յակոբեան, Յովսէփեան, Իսճիկեան, Գասեան, Տէր-Ենօքեան և օրիորդ Ս. Գալչեան ընդունելով Ախալցխայի հայ կանանց բարեգործական ընկերութեան վարչութեան խնդիրը՝ կազմակերպել մի շարք դասախօսութիւններ ի նպաստ մտաւոր զարգացման ընկերութեան անդամների և ցանկացող կողմնակի անձանց, արդէն մարտ ամսից սկսած դասախօսում են մի քանի օգտակար առարկաներից։ Առայժմ դասախօսվել է բնագիտութիւնից՝ մարդակազմութեան մասին, մանկան դաստիարակութիւնից և հայոց գրականութիւնից։ Ունկնդիր օրիորդների և տիկինների թիւը իւրաքանչիւր անգամին հասնում է 50—60-ի, որոնք մեծ բաւականութեամբ յաճախում են դասախօսութիւններին։

Ընկերութեան վարչութիւնը սրանով յայտնում է իր խորին շնորհակալութիւնը յիշեալ մեծարգոյ պարոններին և օրիորդ վարժուհուն, որոնք ուշադրութիւն չը դարձնելով դպրոցական գործերով իրանց ծանրաբեռնված լինելուն, հաճեցին գլուխ անցնել մի այդպիսի գեղեցիկ և օգտակար գործի։

Վարչութեան նախագահ՝

Ե. Զաթալբաշեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՑ-ՅՈՎՍԷՓ ԿԱՅՍՐԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

—

Առաւօտեան 9 ժամ 30 րոպէին Մէյդլինգ կայարանը ժամանեց գերմանական կայսերական զոյգի՝ պրինց Աւգուստ Վիլհէլմի և պրինցէսս Վիկտօրիա Լուիզայի կայսերական գնացքը. Մէյդլինգ կայարանում կայսերական վագոնը մտաւ Ֆրանց-Յովսէփ կայսրը։ Պանցինգ կայարանում հաւաքվել էին բոլոր էրցհերցօգները և էրցհերցօգուհիները, ատեանների ներկայացուցիչները, գերմանական արտաքին գործերի մինիստր ֆօն-Շէն, գերմանական դեսպանութեան անդամները, բուրգոմիստրը և շատ ուրիշ անձինք։ Ճիշտ 10 ժամին Պանցինգ կայարանը ժամանեց կայսերական գնացքը։

Կայարան ժամանելուց յետոյ, ուր բուրգօմիստր Լիւէգէր ճառ արտասանեց, որին պատասխանեց Վիլհէլմ կայսրը, նոյնին մեծութիւնները գնացին Շէնբրուն. ճանապարհին ամբոխը ոգևորված ողջունում էր նրանց։ Շէնբրունի պալատում գերմանական կայսրը արտասանեց հետևեալ ճառը.

«Ձերդ կայսերական մեծութիւն։ Ողորմութեամբն Աստուծոյ և Նախախնամութեան կամքով մենք այսօր միացանք ձեր կայսերական և արքայական առաքելական մեծութեան վեհ անձնաւորութեան շուրջը։ 60 տարի շարունակ, երկու սերունդների ընթացքում ձեր մեծութիւնը անխոնջ եռանդով, հաւատարմութեամբ և ազնւութեամբ նուիրեցիք ձեզ կատարելու ձեր պարտքը ի բարօրութիւն և յերջանկութիւն ձեր ժողովուրդների. ձեր մեծութիւնը կարող է ըստ արժանւոյն և բարձր գոհունակութիւն զգալ, տեսնելով թէ որպէս ամեն կողմից ձեր հաւատարիմ հպատակները աշխատում են խոնարհաբար մատուցանել իրանց սիրելի միապետին իրանց անսահման սիրոյ և շնորհակալութեան զգացմունքները ձեր սիրառատ կառավարութեան համար։ Սակայն միմիայն ձեր միլիօնաւոր հպատակները չեն որ ուրախ տրամադրութեամբ ողջունում են իրանց սիրեցեալ կայսրին և թագաւորին։ Ոչ, միապետութեան սահմաններից դուրս էլ, ամբողջ աշխարհը յարգանքով և հիացմունքով խոնարհվում է ձեր առաջ։ Դուք տեսնում էք այստեղ ձեր առաջ գերմանական դաշնակից իշխանների երեք սերունդ, և նրանցից իւրաքանչիւրի համար օրինակ էիք դեռ աւելի վաղ, քան կանչված էին իրանց բարձր պարտականութիւնները կատարելու։ Ձեր 60 տարիների աշխատութիւններով դուք մեզ հրաշալի օրինակ դարձաք, որոնցով կը հիանան դեռ մեզանից կրտսերի զաւակները և թոռները։ Եւ այսպէս, մենք, ձեր մեծութեան հաւատարիմ բարեկամներս և դաշնակիցներս, և մեզ հետ միասին նորին մեծութիւն գերմանական կայսրուհին և պրուսական թագուհին, իմ ամուսինս, շտապեցինք գալ այստեղ արտայայտելու ձեզ՝ մեզ ոգևորող սրտի սիրոյ և բարեկամութեան զգացմունքը դէպի ձերդ մեծութիւնը։ Սրտի խորքից ողջունում ենք քաջարի միապետին, հաւատարիմ դաշնակցին և խաղաղութեան զօրեղ պաշտպանին, որի համար աղերսում ենք Տէր Աստուծոյ օրհնութիւնը»։

Ֆրանց-Յովսէփ կայսրը պատասխանեց հետևեալը.

«Ձեր մեծութիւնը նորին արքայական բարձրութեան բաւարական ինամակալ-պրինցի, նոյնին մեծութիւններ սաքսոնական և վիւրտէմբերգեան թագաւորների և այստեղ ներկայ եղող գերմանական օգոստափառ դաշնակից իշխանների և հանզէական ազատ քաղաքների ներկայացուցիչների հետ միասին այնքան բարի էիք, որ ընդունեցիք ինձ անձամբ շնորհաւորելու հրաւէրը իմ կառավարութեան 60-ամեակի առիթով։ Դա ապացոյց է ձեր ինձ համար այնքան թանգագին բարեկամութեան, որ ես համարում եմ իմ կեանքի ամենաթանգագին յիշողութիւններից մէկը, և դա ուրախացրեց իմ սիրտը, ուստի խնդրում եմ ընդունել իմ սրտագին և խորին շնորհակալութիւնը։ Ես կարծում եմ, որ ես իրաւունք ունեմ այդ սրտագին համակրութեան ինձ չափազանց երջանկացնող արտայայտութեան մէջ տեսնել միապետական սկզբունքի հանդիսաւոր արտայայտութիւն, որին Գերմանիան պարտական է իր զօրութեամբ և մեծութեամբ։ Աւստրո-Ունգարիայի ույժը նոյնպէս հիմնըված է այդ սկզբունքի վրա։ Իմ ժողովուրդների հաւատարմութեան և անփոփոխ սիրոյ մէջ ես միշտ քաղում էի նոր ույժեր ինձ վրա դրված ծանր պարտականութիւնները արժանաւորապէս կատարելու համար։ Այն փաստը, որ ես տեսնում եմ այսօր իմ շուրջը այդքան մեծ թւով գերմանական իշխանների, աչքի ընկնող արտայայտութիւն է մօտ 36 տարի մեր միջև եղած սերտ անխզելի դաշնակցական յարաբերութիւնների։ Ես յոյս ունեմ, որ այդ դաշնակցութիւնը, որը խաղաղ նպատակներ ունի, կատարեալ չափով կիրագործի իր նպատակը և ամենահեռաւոր ապագայում։ Ես աղերսում եմ աստուածային նախախնամութիւնից, որ նա ողորմածաբար օրհնէ ամեն ժամանակ ձեր մեծութիւններին և գերմանական բոլոր դաշնակից իշխաններին, նոյնպէս և նորին մեծութիւն կայսրուհուն և թագուհուն, որի ներկայութիւնը խորապէս ինձ յուզում է և պարտաւորեցնում է դէպի անկեղծ շնորհակալութիւն»։

Պաշտօնական ընդունելութիւնից յետոյ շնորհակալութիւն մատուցեց գերմ. կայսրուհին։ Կէսօրվայ 1 ժամ 30 րոպէին տեղի ունեցաւ նախաճաշ, որին ներկայ էին նոյնպէս էրցհերցօգները և էրցհերցօգուհիները։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

1 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետական ազնուական հողային բանկի $5^0/_0$-ային արժեթղթերից գըլխաւոր գումարները տարան հետևեալ տոմսերը.

Երկու հարիւր հազար րուբլի—սէրիա 12,190, համար 28. հօթանասունհինգ հազար րուբլի—սէրիա 9643, համար 33. քառասուն հազար րուբլի—սէրիա 2375, համար 23. քսանհինգ հազար րուբ.—սէրիա 13,419, համար 31. տասհազարական րուբլի—սէրիա 4224, համար 37, սէրիա 12,508, համար 29, սէրիա 7714, համար 43. ութհազարական րուբլի—սէրիա 11,862, համար 21, սէրիա 3256, համար 41, սէրիա 11,849, համար 21, սէրիա 9150, համար 27, սէրիա—14,207, համար 6. հինգ հազարական րուբլի—սէրիա 15,323, համար 11, սէրիա 127, համար 10, սէրիա 9509, համար 11, սէրիա 5463, համար 49, սէրիա 9399, համար 23, սէրիա 9347, համար 49, սէրիա 130, համար 34, սէրիա 14,335, համար 15. մի հազարական րուբլի — սէրիա 2596, համար 28, սէրիա 458, համար 12, սէրիա 1287, համար 39, սէրիա 6644, համար 16, սէրիա 11,523, համար 18, սէրիա 15,062, համար 6, սէրիա 7380, համար 5, սէրիա 5798, համար 37, սէրիա 9015, համար 26, սէրիա 4438, համար 29, սէրիա 5193, համար 2, սէրիա 5861, համար 48, սէրիա 8761, համար 45, սէրիա 9845, համար 23, սէրիա 11,272, համար 6, սէրիա 2708, համար 10, սէրիա 7017, համար 29, սէրիա 5297, համար 4, սէրիա 4968, համար 13, սէրիա 5876, համար 5։

Արտաքին

2 մայիսի

ԲԵՐԼԻՆ։ Կայսրը Օֆէնբուրգից մի հեռագիր ուղարկեց պետական կանցլերին, որով սրտագին շնորհակալութիւն է յայտնում այն աջակցութեան համար, որ նա ցոյց տուեց րէյխստագի միջոցով մի քանի կարևոր օրինագծերի և պայմանագրերի ընդունելութեան մէջ։

ՄԱԴՐԻԴ։ Արտաքին գործերի մինիստրութիւնը տեղեկութիւն ստացաւ, որ Տանժերի սպանիական դեսպանը հեռագրում է, որ Կազաբլանկում, սպանիական հրացանաձիգների և ֆրանսիական զուավների միջև տեղի է ունեցել արիւնահեղ ընդհարում քաղաքի մէջ։ Երկու կողմից էլ կրակել են հրացաններից մի քանի անգամ։ Սպանված է մէկը, վիրաւորված են երեքը։ Արտաքին գործերի մինիստրը միջնադէպի մանրամասնութիւնների մասին հարցապընդում ուղղեց։

ՊՐԱԳԱ։ Դուքս Ֆրանց-Ֆերդինանդը մինիստրների, շատ բարձրաստիճան պաշտօնեաների և ատեանի ու արքինարբերութեան ներկայացուցիչների ներկայութեամբ հանդիսաւոր կերպով բացեց յոբելեանական ցուցահանդէսը։

ԼՈՆԴՈՆ։ Ուէլսի պրինց և պրինցէսն հանդիսաւոր կերպով բացին ֆրանս-բրիտանական ցուցահանդէսը։ Ներկայ եղողների թւում կային նաև ֆրանսիական երկու մինիստրներ։ Երաժշտախումբը նուագում էր անգլիական օրհներգը և մարսելիոզը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՒՐՍԱՅԻՆ ԳՆԵՐԸ

2 մայիսի 1908 թ.

Տոկոսաբեր արժեթղթեր

Տոմսակ I փոխ. վիճակախաղի	345 ր. — կ.
Տոմսակ II փոխ. վիճակ.	255 ր. — կ.
Տոմսակ III փոխ. Ազն. Բանկի	227 ր. 50 կ.
$4^0/_0$ Պետական Ռենտա	76 ր. $87^1/_2$ կ.
$5^0/_0$ փ. թ. Պետ. Ազն. Հ. Բ.	86 ր. 25 կ.
$4^1/_2{}^0/_0$ փ. թ. Պետ. » » »	79 ր. 25 կ.
$4^0/_0$ փ. թ. Պետ. » » »	73 ր. $37^1/_2$ կ.
$3^1/_2{}^0/_0$ Գրաւ. թ. Պետ. » »	70 ր. $12^1/_2$ կ.
$5^0/_0$ Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	86 ր. 25 կ.
$4^1/_2{}^0/_0$ Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	79 ր. 25 կ.
$4^0/_0$ Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	73 ր. $37^1/_2$ կ.
$5^0/_0$ Ներքին փոխ. 1905 թ. I	96 ր. $87^1/_2$ կ.
$5^0/_0$ » » » » II	96 ր. $87^1/_2$ կ.
$5^0/_0$ Արտաքին փոխ. 1906 թ.	95 ր. $62^1/_2$ կ.

ԲՈՐՍԱ

Լօնդօնի վրա 10 ֆ. ստ. արժէ	95 ր. 55 կ.
Բերլինի վրա 100 մարկը »	46 ր. 76 կ.
Պարիզի վրա 100 ֆրանկը »	38 ր. 2 կ.
Նաւթ. Թղթ. Նօբել ընկ. »	11,400 ր. — կ.
Կասպիական ընկ. ակցիա »	4100 ր. — կ.
Բագուի ընկ. » »	464 ր. — կ.
Մանթաշեանի » »	155 ր. — կ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ սրանով յայտնում է ի գիտութիւն նախ՝ որ առաջիկայ ուսումնական տարում մայր դպրոցում և նրա բաժանմունքներում նորեկ աշակերտների ընդունելութիւն չի լինելու և երկրորդ՝ էքստերն քննվել ցանկացողների խնդիրները ընդունվում են մինչև մայիսի 5-ը, որից յետոյ սկսվելու են քննութիւնները։

(29, 30, 1, 3) 4—4

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒԿԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—$1^1/_2$—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—$12^1/_2$ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նախասարդեան

ՀՐԱՒԷՐ

Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցու ծխականները

երկրորդ անգամ

հրաւիրվում են

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

որ լինելու է կիրակի, մայիսի 4-ին, ժ. 12-ին

Ժողովի զբաղմունքի առարկաներն են՝

1. Անցեալ 1907 թ. հաշւի և ներկայ 1908 թ. նախահաշւի քննութիւնը և հաստատումը։
2. Զեկուցում դպրոցի ներկայ դրութեան մասին։
3. Նոր հոգաբարձուի ընտրութիւնը՝ հրաժարված պ. Ս. [illegible] տեղ։
4. Դպրոցապատկան շէնքի վերանորոգման հարցը։
5. Ընթացիկ գործեր։

(2.) 1—1

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, մայիսի 4 ին, առաւօտեան ժամը 10-ին կայանալու է Էջմիածնեցւոց ս. Գէորգ եկեղեցում ծխականների հինգերորդ և վերջին ժողով՝ քննելու ծխական դպրոցի գոյութիւնը պահպանելու, եկեղեցին վերանորոգելու եւ այլ խնդիրներ. ուստի սրանով յարգոյաբար խնդրում ենք սոյն եկեղեցու 21 տարեկանից սկսած երկսեռ ծխականներին՝ որոշած օրը և ժամին ներկայ լինել եկեղեցում՝ ժողովին մասնակցելու համար։

Ներսէս ա.-ք. Սրովեանց
Երէցփոխ՝ Մ. Գասպարեանց

(2.) 1—1

Լոյս տեսաւ
Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.
Դիմել հեղինակին՝ Эчміадзинъ, Іоаннесу Іоаннисіану.
(օ.մ.) 10—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8.
(Ե. Հ. Շ.) 100—61

ԵՐԿԱԹՈՒՂԻ

Գնացքների ամառնային երթևեկութիւն

(Ժամերը նշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը՝ Թիֆլիսի ժամանակով)

	ԱՐԱԳ	ԱՐԱԳԸՆԹԱՑ	ՓՈՍՏԱՏԱՐ	ՄԱՐԴԱՏԱՐ	ԱՊՐ.-ՄԱՐԴԱՏ.
Բագուից դուրս գալը . . .	—	4 ժ. 10 ր. ցեր.	11 ժ. 8 ր. առ.	5 ժ. 24 ր. առ.	—
Թիֆլիս հասնելը	—	8 ժ. 30 ր. առ.	5 ժ. 59 ր. առ.	10 ժ. 52 ր. երեկ.	—
Թիֆլիսից դուրս գալը .	(9 ժ. 3 ր. երեկ.)	—	(7 ժ. 47 ր. առ.)	(12 ժ. 28 ր. գիշ.)	—
Բաթում հասնելը	7 ժ. 14 ր. առ.	—	8 ժ. 40 ր. երեկ.	12 ժ. 36 ր. ցեր.	—
Բաթումից դուրս գալը.	11 ժ. երեկ.	—	7 ժ. 1 ր. առ.	5 ժ. 57 ր. երեկ.	—
Թիֆլիս հասնելը.	9 ժ. 44 ր. առ.	—	8 ժ. 38 ր. երեկ.	7 ժ. 22 ր. առ.	—
Թիֆլիսից դուրս գալը.	—	(11 ժ. 21 ր. գիշ.)	(10 ժ. 36. ր. երեկ)	(8 ժ. 58 ր. առ.)	—
Բագու հասնելը. . . .	—	1 ժ. 35 ր. ցեր.	4 ժ. 45 ր. ցեր.	12 ժ. 57 ր. գիշ.	—
Ջուլֆայից դուրս գալը.	—	—	5 ժ. առ.	—	—
Երևանից դուրս գալը. .	—	—	—	—	9 ժ. 27 ր. երեկ.
Ալէքսանդրապոլից դուրս գալը.	—	—	7 ժ. 59 ր. երեկ.	—	5 ժ. 30 ր. առ.
Թիֆլիս հասնելը. . . . :	—	—	5 ժ. 28 ր. առ.	—	3 ժ. 30 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը. .	—	—	(12 ժ. 53 ր. գիշ.)	—	(11 ժ. 48 ր. առ.)
Ալէքսանդրապոլ հասնելը.	—	—	10 ժ. 21 ր. առ.	—	9 ժ. 53 ր. երեկ.
Ջուլֆա հասնելը.	—	—	11 ժ. 47 ր. գիշ.	—	—
Ալէքսանդրապոլից դուրս գալը.	—	—	10 ժ. 50 ր. առ.	—	10 ժ. 15 ր. երեկ.
Կարս հասնելը.	—	—	2 ժ. 9 ր. ցեր.	—	1 ժ. 49 ր. գիշ.

Типографія „[illegible]“ Авака [illegible]